




Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Ե. — ՇՐՋԱՆ ԺԱ.

ՏԱՐԻ ԺԱ. — ՄԱՅԻՍ 31.

ԿՐՕՆԱԿԱՆ

ԿՐՕՆԻ ԳԱՍԱՏՈՒԹԻՒՆ.

Իւրաքանչիւր անձի եւ աղգի համար անշուշտ եւ միշտ նախամեծարելի եւ նուիրական է կրօնը, հետեւաբար անհրաժեշտ պարտք է ամեն բանէ աւելի ինչպէս կրօն ունենալը՝ նոյնպէս կրօնական գիտելիքները ուսանիլ եւ իմանալը:

Այլ որ կրօն չունի կամ ուսանիլ չսիրեր, նա կատարեալ վայրենի է, խիղճ եւ զգացումը նորա համար նշանակութիւն եւ կարեւորութիւն չունի, հետեւաբար այնպիսի անձը մարդկութեան մէջ նախատինք է, միանգամայն մի ահւելի հրէշ կհամարուի:

Իսկ կրօնը եւ կրօնական գիտելիքները ինչպէս ամենեցուն համար նուիրական եւ պարտաւորական են, նոյնպէս անշուշտ ամենայն անձն պէտք է ուսանի եւ գիտնայ, հետեւաբար պիտի ուսանի իւր գիտցած եւ հասկացած լեզուով:

այս ինքն՝ իւր ազգութեան յատուկ եղած — մայրենի լեզուովը:

Այս խնդիրը այնպիսի պարզ միանգամայն անպատրուակելի մի ճշմարտութիւն եւ ընդհանուրի վերաբերեալ անհրաժեշտ պարտաւորութիւն կպարունակէ, որ ինչպէս մեր Փրկիչ Յիսուս Քրիստոս ուսուցած եւ պատուիրած է, նոյնպէս թագաւորութիւններ՝ իշխանութիւնք՝ քաղաքական — դրական օրէնքներ եւ կանոններ դնելով մեծ ուշադրութեամբ եւ խստիւ սահմանադրած եւ պարտաւորական արած են՝ մինչեւ այն աստիճան՝ որ ուրիշ ոչ սակաւ կրօններ կամ աղանդներ եւս իներկայիս այդպիսի պարտաւորական կանոնաց ներքեւ ապահովեալ են, որոց համար մանրամասնելը ներկայ յօդուածոյս իսկական նպատակէն դուրս է:

Մասնաւորեմք մեր տեսութիւնը:

Մեր Հայքս եւս ունիմք եւ կալաշտեմք Քրիստոնէական Կրօն եւ պարտաւորեմք՝ միանգամայն կտրիւմք ուսանիլ կրօնը եւ կրօնական գէթ անհրաժեշտ

— Կարեւոր գիտելիքները, ինչպէս նաեւ առհասարակ հարազատ եւ բարենախանձ Հայոցս սրտից եւ դգացմանց ընդդէմ սովորածներ եւ դառն տպաւորութիւն կը դգամը եթէ հակառակ եւ վնասակար թելադրութեանց հանդիպիմը, կվիրաւորուիմք չարաչար, եւ վերջապէս բողոքներու առիթ կը տրուի եւ ամեն միջոց ձեռք կառնուիմք՝ մինչեւ որ յաջողիմք եւ տպահովեմք մեր նուիրական եւ թանկագին կրօնը եւ կրօնական ուսումը ազգային ամեն վտեմ՝ եւ թանկագին յատկութեանց հետ իմիասին, — որոց համար մեր նախնիք անքան շահատակեցին եւ ամեն բան զոհեցին եւ այնպէս աւանդեցին մեզ:

Նյսպիսի վտեմ դգացմանց եւ եռանդեան մէջ վառուած Հայոցս համար պարզապէս կրօնի ընդդէմ ճնշում կը համարուի՝ երբ՝ ուր կուգէ թոյլ լինի՝ այս կամ այն անձինքներէն որպիսի եւ իցէ մի արգելք եւ հակառակ թելադրութիւն տեսնուի: Մի եւ նոյն ծանր եւ դառն տպաւորութիւնը կներգործեն մեզ եթէ ակնարկեալ նպատակով եղած կամ մինչեւ անգամ մտադրուած եւ նախապատրաստուած պախտակելի տնօրէնութիւններ տեսնուին՝ այս եւ այն քաղաքներում՝ եւ կողմերում՝ ազգային - հայկական կամ արքունական՝ մինչեւ անգամ Հայոց դրամներով հիմնուած եւ կառավարուող գպրոցաց մէջ այս եւ այն անձի քմահաճոյ եւ յանդուգն թելադրութեամբք եւ մոլեռանդութեամբք հրամաններ տրուելով Հայոց լեզուի եւ կրօնի հայերէն լեզուով գաւառութիւնը (գպրոցներէն) ար-

գելելոյ համար, եւ այն մտնաւանդ այնպիսի դպրոցներէն՝ որոց մէջ հարիւրաւոր Հայ մանուկներ յանձնարարուած են եւ ուսումն կառնուին, կամ թէ գլխաւոր դերը եւ մեծամասնութիւնը Հայոց կվերաբերի, մինչդեռ մինչեւ ցայսօր արքունական գպրոցներում եւս Օգոստ. եւ բարեխնամ՝ Կայսերաց շնորհիւ եւ հրամաններով՝ եւ Կայսերական կառավարութեանց ազատամիտ տնօրէնութեամբք՝ առանց խտրութեան՝ իւրաքանչիւր ուսանողի մայրենի լեզուն եւ կրօնը պարտաւորական առարկայից եւ ուսմանց մէջ գրուած եւ յատուկ դատաւորներով (իւրաքանչիւր ուղղի կամ կրօնիներկայացուցչաց տնօրէնութեամբ) կաւանդուին, (թողումը յիշել միւսները) . — անշուշտ մի եւ նոյն դառն տպաւորութեամբք կը դգածուիմք եւ չարաչար կվիրաւորուիմք նաեւ եթէ ջանան եւ հետեւին՝ որ օտար լեզուաց կարեւորութիւնը եւ նոցա մէջ աւելի վարժուիլը եւ հմտանալը պատուակելով՝ օտար լեզուներով Հայ մանկանց աւանդուի Հայոց կրօնը եւլն, Հայ մանկանց՝ որք իւրեանց մայրենի ճոխ՝ պատուական եւ թանկագին լեզուն ունին եւ գիտեն, միանգամայն պարտին տնշուշտ մայրենի լեզուով՝ Հայերէնով ուսանիլ եւ գիտնալ Հայոց կրօնը:

Եթէ ներկայ դարուս զարգացեալ եւ ադատամիտ՝ հանրակրթական գովելի կոնօնաց եւ պահանջմանց համեմատ՝ անխտիր եւ առհասարակ իւրաքանչիւր ազգի կարեւոր եւ մեծ պարտք է անշուշտ հանրակրթական ուսմանց ըսկզնական գիտելիքները իւր մայրենի

լեզուով ուսանել՝ եւ այնպէս զարգա-
նալ՝ հասարակ որչափ աւելի կարեւոր եւ
պէտք է մայրենի լեզուն՝ կրօնը եւ կր-
օնական գիտելիքները եւս անշուշտ եւ
ըստամենայնի եւ մինչեւ վերջը մայրե-
նի լեզուով ուսանիլ եւ գիտնալ :
Վասն զի՝ եթէ՝ ի Գաղղիա՝ գաղղիե-
րէն, ի շնդկատան՝ հնդկերէն, ի Գեր-
մանիա՝ գերմաներէն, ի Պարսկաստան՝
պարսկերէն, ի Քրքաստան՝ թրքերէն,
յիւսալիա՝ իտալերէն եւ յԱնգղիա՝ անգ-
ղերէն եւլն լեզուներով հարկ եւ
պարտաւորական լինի կրօնը եւ կրօ-
նական գիտելիքները ուսանիլ, ըստ այ-
սըմ՝ զարգացած Հայը ինչ պիտի հա-
կանայ Հայոց եկեղեցում պաշտուած
եւ կարգացուած հայերէն արարողու-
թիւններէն եւ ընթերցմունքէն, Հեռ-
զհեռ օտար լեզուներով կրօնը ուսա-
նելով եւ ուսանողաց թիւը չափնա-
լով՝ ինչ պէտք է անել. Հայք օտա-
րաց եկեղեցիքը յաճախել պիտի պար-
տաւորուին՝ թէ չէ՝ Հայոց եկեղեցական
Գերիշխանութեան կամ Նուիրապետու-
թեան հարկ պիտի լինի Հայոց եկեղե-
ցոյ մէջ ամեն տեղ եւ կողմ՝ տեղական
լեզուով պաշտել տալ ամենայն ինչ,
որպէս զի կրօնը օտար լեզուներով ու-
սանողները մի բան հասկանան. իսկ եթէ
Հայ տղայք կամ ուսանողները անտար-
բեր մնան եւ երբէք կրօն չուսանին,
որ օրէնք կներեն՝ որ ուսանողք անկրօն
կամ կրօնական պարտաւորութեանց
մէջ անտարբեր կամ անզգայ մնան. եւ
եթէ անկրօն մնան, չէ՞ որ կատարեալ
վայրենիներ եւ անբարոյականներ սլիտի
լինին եւ յաւելնան՝ եւ ընդ այս ո՞ր իշ-

խանութիւն եւ օրէնք կներեն. Հապա
մէր թողումք Հայոց եկեղեցին՝ Ազգը եւ
եկեղեցական Գերիշխանութիւնը՝ որ ոչ
երբէք չեն ընձար եւ ոչ կը յօժարին ան-
կրօն եւ անբարոյական անդամներ եւ
որդիք ունենալ, որպէս զի քաղ. իշ-
խանութեանց եւս անհաւատարիմ հը-
պատակներ չդառնան:

Ահաւասիկ մի քանի . . . անձանց ըզ-
ձացած նորօրինակ եւ պախարակելի
կրթական ճաշակին եւ նպատակին հե-
տեւանքը այս տեսակ վտանգաւոր սը-
տուղներ կրնան արգիւնաւորել եւ դա-
նադրան վատ կասկածանաց՝ յուսահա-
տութեանց թելադիր լինել, բայց եւ
այնպէս թող. նոքա վստահ լինին՝ զի
ոչ ջոճալ եւ հարազատ Հայք երբէք չեն
վիջանիր եւ չեն ներեր անգամ այսպի-
սի վատամիտ կրթութեանց եւ նպա-
տակաց:

Վ. Ե. Մ.

Թի. Ինքզիւ

ՀԱՌՎԱՐԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Ո Չ Ե Ի Ս Է

ԿԱՐՈՒՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ:

(Երանականութեան):

Դ.

Թի. Ինչպէս Հառվելական եկեղեցին ոչ եւ է
ԿԱՐՈՒՂԻԿԵ այս ինքն ԸՆԴՀԱՆՐԱՊԱՅՈՒՆ:

Այժմ ու Հռովմէական եկեղեցին ինչ-
պէս որ ոչ է մի եւ սուրբ, Կաթողիկէ եւս
չէ:

Այժմու հռովմէական եկեղեցւոյ խօսքին նայելով՝ եկեղեցին առաւելապէս անով է կաթուղիկէ՝ որ անոր հաւատացեալները բազմաթիւ են եւ աւելի ընդարձակ տեղեր տարածուած։ Այս խօսքը կաթուղիկէ կամ ընդհանրական բառին նշանակութիւնը բողոքովին կիսանգարէ։ Ընչպէս որ յետոյ պիտի տեսնեմք։ Վասն զի սրբոց Հարց հասկըցողութեանը նայելով՝ ճշմարիտ կաթուղիկէութիւնը կամ ընդհանրականութիւնը՝ միայն վարդապետութեանը վերայ է։ Քրիստոսի առաջին աշակերտները, որ յիրաւի հօս փոքրիկ էին՝ կաթուղիկէ եկեղեցի կկազմէին թէ ոչ։ Եւ սակայն ոչ բազմաթիւ էին եւ ոչ ընդարձակ երկիր բռնած։ Ուստի երանելին Օգոստինոս կըսէ։ «ճշմարիտ վարդապետութիւնը չպահօղները թէպէտ եւ եկեղեցւոյն գտնուած ամեն երկիրներն ալ տարածուած լինին, անով չեն լինիր մասն եկեղեցւոյ»*)։ Ապա ուրեմն ոչ բազմութիւնը բաւական է ճշմարիտ ընդհանրականութիւն տալու, եւ ոչ երկրի ընդարձակութիւնը։

Այսու ամենայնիւ հռովմէական եկեղեցւոյ պարծենկոտ հաշիւներուն անգամ ստութիւնը դուրս հանելու համար՝ զնեմք թէ եկեղեցւոյ ընդհանրականութիւնը իւր բռնած տեղոյն ընդարձակութեանը վրայ հաստատուած է։ Միթէ յունադաւանները, Անգղիականները, բողոքականները, մէկ խօսքով հռովմէական եկեղեցին նոյն

վող ազգերը, անոր պէս տարածուած չե՞ն ամեն տեղ։ Նա որովհետեւ իւր գրածները միայն կկարգայ, բնական է որ չգիտնայ ուրիշ քրիստոնեայ ժողովրդոց ըրածները։ Բայց նորա չգիտնալովը կարելի չէ ըսել՝ թէ այն ժողովուրդները չունին քարոզիչներ, եւ կամ իրենց հաւատքը տարածելու համար ընկերութիւններ։

Դարձեալ, զնեմք թէ եկեղեցւոյ ընդհանրականութիւնը հաւատացեալ բազմութիւ լինելուն վրայ է։ Միթէ կարելի է ըսել՝ թէ այժմու հռովմէական եկեղեցին ունի այս առաւելութիւնը։ Միթէ հռովմէական եկեղեցւոյն հերձուածող անուանած ժողովուրդները իւր հպատակներէն աւելի բազմաթիւ չե՞ն։ Թողումք այն հազարաւոր կաթուղիկները՝ որ հաւատարիմ մնացած են 1870ին յուլիսէն առաջ եղած դաւանանքին։ աշխարհիս երեսը գրեթէ հարիւր միլիոն յունադաւան ժողովուրդ կայ*)։ քսան հինգ միլիոն անգղիական, վաթսուն միլիոն բողոքական։ որով առեւ թէ քրիստոնէութեան մէջ հարիւր ութսունը հինգ միլիոն հաւատացեալք կան որ իրենց կողմանէ հերձուածող կհամարին հռովմէական եկեղեցին**): Արդ այժմու հռովմէական

(*) Այս թիւը բողոքականի մը դրածն է, որ է տը Մէսթրալ հովիւը (քահանան) իւր զատկեր եկեղեցւոյն Քրիստոսի ի ժԹ դարուն (Tableau de l'Eglise chrétienne au XIX-e siècle) գրուածքին մէջ։ Լոզաննա, 1870։

(**) Նիւ-եօթ Թիպիւն անունով լրագրին նոր մէկ վիճակագրութեանը նայելով, անգղիական եւ

(*) Տես Միւրքիւն եկեղեցւոյ (Unit. eccles.) Պ Ղ։

եկեղեցին այս գումարին կհասնի թէ ոչ: Ոչ երբէք վասն զի իրեն խօսքին ալ նայելով՝ հռովմէական կաթողիկոսներուն թիւը հարիւր քառասուն կամ հարիւր յիսուն միլիոնէն աւելի չէ:

Բայց այս հարիւր յիսուն միլիոնն ալ ի՞նչ է: Տեսնեմք մէյմը թէ ինչո՞վ ձեւացած է այս թիւը, եւ այս ահաւոր տեսարանին մէջ նկատեմք իրական տեսարանը:

Եւ նախ՝ դուրս հանելու է այն տրգէտներուն անբաւ բազմութիւնը, զանոնք որ չեն գիտեր ամենեւին՝ թէ խընդիրը ինչ բանի վրայ է, եւ ոչ զայն՝ թէ ինչ կէտերու վրայ հին կաթողիկոսները, յունադաւանները, անգղիականները ու

բողոքականները կհակառակին այժմու հռովմէականներուն: Ուստի եւ բնականապէս իրենք իրենց որտի՞ն մէջ ոչ հռովմէական են, եւ ոչ միւս քրիստոնեայ ժողովրդոց կարգէն: Մեր տարակոյս չունիմք որ եթէ մէկը հասկըցընէր նոցա այս զանազանութիւնները՝ նոցա հասկըցողութեանը յարմար կերպով մը, շատը պիտի ասէին՝ թէ ես այժմու հռովմէական հաւատքը ոչ երբէք ունեցեր եմ, եւ այժմ՝ եւս չունիմ:

Սոքա ուրեմն չեն գիտեր թէ ինչ բանի կհաւատան, եւ ասոնց քովը կեցած է ուրիշ բազմութիւն մը՝ որ գիտեն թէ չեն հաւատար: Եւ ասոնք են այն հռովմէական կաթողիկոսները՝ որ խօսք դրած են մէջերնին, եւ կամ համոզուած են իրենց դաւանութեանը: Ա՛ւ նոցա վրայէն մկրտութեան ջուրը, հռովմէականութիւն չմնար նոցա վրայ: Նոքա իրենք զիրենք հռովմէական կաթողիկ կանուանեն, եւ իրենց եկեղեցւոյ մէջ կմնան միայն անոր համար որ հոն ծնած ու անոր մէջ կրթուած են, եւ հազարաւոր բնոտանեկան կապեր չեն թողուր իրենց անկից՝ դուրս մեռնիլ: Բայց իրօք իրենք ալ կիսոստովանին, ոմանք՝ թէ սկեսպտիկեան (կամ անտարբերեայ) են, ոմանք՝ թէ անհաւատ կամ թերահաւատ, եւ ոմանք՝ թէ կաթողիկ ոչ անդրալեռնական (կամ ոչ պապական): Ուրեմն կմնան ոմանք միայն՝ որ կկարծուի թէ կհաւատան ու գիտեն: Բայց նաեւ այս երրորդ կարգիս մէջ, որ միւս երկու կարգերուն նայելով՝ գրեթէ ոչ ինչ է, եւ հռովմէական եկեղեցին այս կարգերը միայն

բողոքական ժողովրդոց թիւը կարելի է հանել մինչեւ հարիւր քսանը մէկ միլիոնի՝ այսպէս բաժանելով:

Միացեալ Նահանգք	55,000,000
Մեծն Բրիտանիա եւ Իռլանտ	25,000,000
Գերմանական կայսերութիւն	25,000,000
Շուետ, Նորվեկիա եւ Տանիմարքա	7,500,000
Հոլանտա, Պիլճիա, եւ Գաղղիա	3,000,000
Մաճառստան, Աւստրիա եւ Ռումանիա	6,000,000
Չուիցերի, Ռուսաստան եւ այլ կողմանք Եւրոպայ	5,000,000
Անգղիական Ամերիկա, ընդ նմին եւ Արեւմտեան Հնդկաստան	4,000,000
Աւստրալիա, Թասմանիա եւ Նոր Զելանդիա	4,500,000
Վերերիա, Նաթալ, Գլուխ Բարեյուսոյ	4,500,000
Եգիպտոս եւ այլ կողմանք Աֆրիկայ	4,000,000
Հայաստան եւ այլ կողմանք Ասիոյ	5,000,000
Հարաւային Ամերիկա	4,500,000
Ընդ ամբողջ	421,000,000

իրաւունք ունի սեպհական համարելու իրեն, որքան մարդիկ կան որ իրօք կիս կատար կերպով կհաւատան, ու գիտցածին վեր ի վերոյ գիտեն:

Սոքա կրնային մտածել, բայց իրօք չեն մտածեր. այսօրուան օրս անոր համար միայն հռովմէական կասուին՝ որ երեկ հռովմէական ասուեր են: Իրենց հաւատքը սովորութիւն մը դարձած է: Ինչպէս որ մէկ ցեղէ մէկալը անցնելով մարդուս ձեռք բերած յատկութիւնները արեան հետ մէկտեղ որդւոյ որդի կանցնին, ու բնական ազդեցութիւն մը կդառնան, այսպէս ալ հռովմէական եկեղեցւոյ վրայ խօսելու սովորութիւնը եւ անոր հաւատարիմ եմք ըսելու բնաւորութիւնը՝ նոցա կարծեօքը քրիստոնէութեան մէկ մասն է. եւ որովհետեւ կենսական վարմունքի մէջ այս բանիս համար նեղութիւն մը չեն քաշեր, հարկ մը չեն տեսներ իրենց սրտէն այս սովորութիւնը դուրս ձգելու: Ահա այսքան միայն է նոցա սէրը Հռոմի վրայ:

Ոմանք, մանաւանդ կանանց մէջէն, այդ սովորութեանը հետ մէկտեղ կը խառնեն զգայականութիւն կամ փափկասրտութիւն: Սոքա եթէ պատիկ կը պահեն այժմու հռովմէականութեան, ոչ միայն անոր համար է որ անոր ինչեղածը չեն գիտեր, եւ հաւատոյ բաներն ալ սովորութիւն մը դարձուցեր են իրենց, հապա նաեւ անոր համար որ հռովմէականութեան մէջ նոր տեսակ բարեպաշտութիւն մը՝ խորհրդաւոր ջերմեանդութիւն մը կգտնեն. մէկ խօսքով՝ այնպիսի կերպ մը խօսակ-

ցութեան եւ գործողութեան՝ որով իրենց ջղերը հեշտալի կերպով մը կը ղուարճանան, եւ սրտերնին բոլորովին նոր կերպով մը կշարժի: Հռովմէական հաւատքը տաք է կըսեն, եւ անոյշ դող մը կբերէ մարդուս վրայ. իսկ ուրիշ հաւատքները անոր ներհակ՝ պազ են ու մարդուս խելքին հետ միայն կխօսին. ահա ասոր համար է որ իրենք հռովմէական են: Ոմանք ալ հռովմէական են՝ վերիվերոյ տեղեկութիւն մը միայն ունենալով անոր վրայ: Վէճեօն կարգացեր են, գուցէ նաեւ կեանքին, այն իրենց բաւական է: Թող որ քիչամօն անգամ, որ ջերմեանդութենէ շատ հեռու է, Վէճեօն կողմը կըռնէ, ու հռովմէականութեան ջատագով է. ըսել է որ թէ Վէճեօն զօրաւոր մարդ է, եւ թէ հռովմէականութիւնը. ապա ուրեմն որ անկողմնասէր մարդը կարող է նոցա դէմ բերան բանալ: Այս տեսակ խորհրդածութիւնը խելքէ դուրս կերպով մը տարածուած է: Փարիզու մէջ ժողովրդագետներ կմտնաչեմք՝ որ այդ բանը բարձրաձայն կը քարոզեն. այնպէս որ այն Գաղղիացի եկեղեցիները որ ատենով իրենց ատուածաբանութիւնը եկեղեցւոյ Հարց գրուածքներէն ու վաւերական պատմութիւններէ կտորվէին, այժմ վարդապետական խնդրոց մէջ ձեռք կառնուն Ֆիլարս, որ աշխարհական Ինկիլէն է եւ Ինկիլէն՝ որ եկեղեցական Ֆիլարս է: Ուստի զարմանք չէ որ այս անդրալեռնականաց մէջ բանականութեան տեղը բռնած է երեւակայութիւնը, գիտութեան տեղ շատախօսութիւնը, ու

դիւղ տրամաբանութեան տեղ բառերու խաղը՝ հիմնական խնդրոց տեղ անձնական խնդիրները։ Վիճաբանութեան տեղ անարգանք ու բանադրանքը։ Հաւատոյ հպատակութեան տեղ՝ կոնսալցութեան հոգին։ Երբեմն նաեւ շօշափելի արծաթոյ պարզ համոզումը։

Այս ետքի տեսակ մարդիկը որ հրեւոյժական եկեղեցւոյ կալած են, եւ անոր իրենց վրայ դրած պարտքերը կրկատարեն յայտնապէս, բայց միայն անձնական շահու համար։ Գուցէ միւս ամեն տեսակներէն աւելի բազմաթիւ են։ Այսին զի սոքա այնպիսի մարդիկ են որ կարօտ են հաստատ մնալու իրենց վիճակին կամ պաշտօնին մէջ, անուն հանելու, իրենց կուսակիցներ գտնելու, եւ չեն վախնար եկեղեցւոյ խորհուրդները ընդունիլը հնարք մը դարձնելու՝ որ անով եկեղեցականաց համարումն ու պաշտպանութիւնը վաստակին։ Այս կարգի մէջ պէտք է համարիլ այն ամենայն կարծեցեալ օրինապահ մարդիկը՝ որ տեսնելով թէ իրենց չորս գին ամեն բան կործանելու վրայ է, սուտ ազատասիրաց անկարգութիւններէն եւ օրինաւոր իշխանութեան արհամարհութիւններէն հասկընալով՝ թէ անպատճառ հարկաւոր է ուրիշ ամեն ժամանակէ աւելի ամուր բռնել օրինաւոր իշխանութիւնը, եւ կարծելով թէ այժմու պապն է միայն օրինաւոր իշխան Եւրոպայի մէջ, սաստիկ կալած են պապին եւ նորա անդրաբռնական վարդապետութեանը, որպէս թէ մարդկային աղբիւս ամեն տեսակ ընկերական ու առեւտրա-

կան շահերուն ալ մի միայն միակարար տախտակը նա է։ Անմիտները չեն տեսներ՝ թէ ինչ տարբերութիւն կայ օրինաւոր իշխանութեան եւ բռնակալութեան մէջ, եւ չեն հասկընար թէ ինչպէս որ ատենով կաթոլիկ Հռոմը խոհական իշխանութիւն մը բանեցընելով օգտակար եղաւ մարդկային ընկերութեան, նոյն չափ ալ անդրաբռնական Հռոմը, եւ 1870ին յուլիսի 18ին հերետիկոսացեալ Հռոմի բռնակալութիւնը վնասակար պիտի լինի անոր։ Մարդկային ընկերութեան ամենէն աւելի վտանգաւոր թշնամիները նոքա չեն՝ որ յայտնի կերպով աղատութիւնը ի չարն կբանեցընեն, հապա նոքա որ ծածուկ կերպով կխանգարեն ու կխարդախեն ճշմարիտ եւ օրինաւոր իշխանութեան գաղափարն ու իսկութիւնը։ Բայց եթէ այս մեր յիշած օրինակահերոուն խօսքը ճշմարիտ եւս լինէր, տարակոյս չկայ ամենեւին որ նոցա կաթոլիկութիւնը գերբնական բան մը չունենալով, եւ միայն նիւթական շահու վրայ եւ յայտնի անձնաւորութեան վրայ հաստատուած լինելով՝ չկրնար այն կրօնական կաթողիկէութիւնը ձեւանալ՝ որ հռոմէական եկեղեցին կրպործենայ թէ ունի։

Արդ եթէ այն հռչակաւոր հարկը յիսուն միլիոնին վրայէն հանուք մէկ կողմանէ դանոնք՝ որ բարեպաշտական գործերէն հեռու են, եւ հաւատք ալ չունին, այս ինքն մկրտեալ քրիստոնէից մէջէն այն անհուն բազմութիւնը՝ որ հռոմէական հաւատոյ անուն անգամ չեն ուզեր լսել իրենց բոլոր կենացը

մէջ, եւ չեն կամենար որ իրենց մահունէն քառորդ մը առաջ վերջին օծման իւրը ընդունին՝ եթէ ոչ իրենց ազգականաց կամքը՝ կատարելու համար՝ եթէ ուրիշ կողմանէ դուրս հանեմք անկից ալ աւելի մեծ բազմութիւն, այս ինքն զանոնք՝ որ իրենք զիրենք հռովմէական կանուանեն միայն տգիտութեամբ, հնոտի սովորութեամբ, զգայական փափկասրտութեամբ, թերակատար գիտութեամբ, մարդկային նկատմամբ, եւ պարզապէս նիւթական շահու համար, արդեօք քանի՞ հատ ճշմարիտ հռովմէական կմնան՝ որ լինին ծանրագլուխ, բան հասկըցող, իրենց դաւանութիւնը լաւ գիտցող, իրենց խղճմըտանքը լաւ քննող, անկեղծ եւ համոզուած . . . շիտակը՝ մենք չեմք համարձակիր ըսելու թէ միայն քանի մը հազար հոգի կմնան, բայց կճանչնամք այնպիսի հռովմէականներ որ մտքերնին դրած են թէ հազիւ քանի մը հարիւր անձինք կգտնուին այնպիսիք . . . :

Ամենեւին տարակոյս չկայ որ ուրիշ քրիստոնեայ ժողովրդոց մէջ ալ այդ տեսակ զանազանութիւններ կարելի է ընել, եւ անշուշտ ամենուրեք մէջ ալ կան սկեպտիկեաններ, ագէտներ, հնոտի սովորութեանց կապուածներ, սուտ ջերմեռանդներ, մարդկային նկատմամբ ու շահասիրութեամբ շարժողներ, Բայց որ եւ իցէ անկողմնասէր մարդ պէտք է խոստովանի՝ թէ գերմանական ցեղերուն, եւ մանաւանդ սլաւեան ցեղերուն կրօնական զգացմունքը՝ հաւատքը՝ աւելի լուսաւորեալ, աւելի ծանր, աւելի

խորունկ է, քան թէ լատինական ցեղերունը, որ քանի կերթան՝ աւելի կը դառնան՝ որը դէպի անաստուածութիւն, որը դէպի աւելորդաաղաշտութիւն, եւ եթէ չգուշանան՝ շուտով երկու կողմը պիտի բաժնուին երկու կողմ իրարու հակառակ, մէկը կարմիր ներագնեայք (էնթէ-հասթօնալ-րո-ժ)՝ որ թշնամի են Աստուծոյ, եւ միւսը սև ներագնեայք (էնթէ-հասթօնալ-հո-սո-սո)՝ որ ծաղր կընեն դԱստուած:

Ապա ուրեմն եթէ եկեղեցւոյն Կաթոլիկ աստուելուն համար բաւական լինէր միայն թուոց բազմութիւնը եւ երկրի ընդարձակութիւնը, ինչպէս որ կվարդապետէ հռովմէական եկեղեցին, զարձեալ չկրնար նա ըսուիլ Կաթոլիկ կամ ընդհանրական եկեղեցի: Բայց եկեղեցւոյն ընդհանրականութիւնը նորա վարդապետութեանը վրայ է, Վինկենտիոսի Արեւնացւոյ ասածին պէս՝ կաթոլիկէ կամ ընդհանրական եկեղեցին այն է՝ որ կհաւատայ այսօրուան օրոյ այն բանին, որում հաւատացեր են ամէն պէր, ամէն ժամանակ և ամէն մարդիկ*):

Այս է ահաւասիկ ճշմարիտ ընդհանրականութեան մեծ սկզբունքը, այս է ամենայն Հարց եւ ամենայն ուղղափառ աստուածաբանից հաշակած հաւատոյ կանոնը:

Յակոբ Նիկոլ Քօլպէն՝ Ռուանի արքեպիսկոպոսը՝ 1697ին անգամ այսպէս կգրէր իւր քահանաներուն. « Մեծ պատկառանք մը ունեցէք միշտ սրբա-

(*) Quid ubique, quod semper, quod ab omnibus creditum est.

զան հնութեան յիւրայ. ձեր բոլոր ուժովը խելամուտ եղէք անոր, եւ ձեր վիճակին պաշտօնները կատարելու ժամանակ՝ այն սրբազան յիշատակներէն քաղեցէք ձեր վարուց կանոնները: Որպէս զի ազատ մնաք այն վնասակար թուրութիւններէն՝ որ մտած են վերջի ժամանակներս նոր աստուածաբանից ձեռքովը, եւ անոնցմէ պաշտպանութիւն կգտնեն. սաստիկ տպաւորութեամբ հաստատեցէք ձեր մտքին մէջ Վինկենտիոսի Լիրենացւոյ այս կանոնը որ թէ՛ բարուց եւ թէ՛ հաւատոյ վարդապետութեան մէկ մասն է. «Քարողել քրիստոնէից որ եւ իցէ բան՝ նոցա ընդունածներէն դուրս՝ հրաման չկայ ոչ մի ժամանակ, հրաման չկայ ոչ մէկ տեղ, եւ հրաման պիտի չարուի երբէք: Ընդհակառակն, նղովելը զանոնք՝ որ կքարողեն որ եւ իցէ բան՝ որ առենով չէ ընդունած, այնպիսի պարտք մի է՝ յորմէ ոչ երբէք կարող է մարդ ինքզինքը ազատ կարծել, յորմէ ոչ մէկ տեղ մը կարելի չէ ազատել, յորմէ կարելի չպիտի լինի ազատիլ յաւիտեան»:

Ռուանի արքեպիսկոպոսին այս կարծիքը՝ որ ուրիշ բան չէ եթէ ոչ Վինկենտիոսի Լիրենացւոյ ուղղափառական խօսքին բացատրութիւնը, ոչ ասպէ՛ն յայտնի դատապարտութիւն է այժմու հռովմէական եկեղեցւոյ, որ ի Քրիստոսէ յայտնեալ ճշմարտութեան տեղ կը դնէ այնպիսի կարծիք մը՝ որ 1870ին յուլիսի 18էն առաջ հռովմէական եպիսկոպոսներուն առջեւ անգամ համարեալ էր դարձելի եւ վտանգաւոր մոլորութիւն, թէպէտեւ այն եպիսկո-

պոսները անով իրենց ուղղափառութենէն դուրի չէին երեւնար, եւ ոչ իսկ Հռովմայ առջեւը Միթէ յայտնի բան մը չէ՞ մէկ կողմանէ՝ որ այժմու հռովմէականք իրենց առաջուց ընդունածներէն դուրս բան մը կքարողեն. վասն զի եթէ նոքա իսկզբանէ հետէ՝ ընդունելի պապին անսխալականութեան եւ ամենակարողութեան վարդապետութիւնը, ինչո՞ւ համար պիտի սպասէին 1800 տարի այսպիսի երեւելի վարդապետութիւն մը քարողելու համար, եւ ինչո՞ւ ճշմարտապէս ուղղափառի տեղ պիտի դնէին զանոնք՝ որ 1800 տարի այս վարդապետութեան դէմ պատերազմեցան: Ուրիշ կողմանէ՝ միթէ յայտնի չէ՞ որ հին կաթողիկոսները ուրիշ բան չեն ըներ՝ եթէ ոչ Ռուանի արքեպիսկոպոսին յիշած անհրաժեշտ պարտաւորութիւնը կատարել, որ է՝ նղովել զանոնք որ արդէն ընդունածներէն դուրս ուրիշ բան կքարողեն»:

Ուրեմն եթէ պապական նղովք կկարգան հին կաթողիկոսներուն միայն անոր համար որ սոքա իրենց կաթողիկէութեան պարտքը կկատարեն, ոչ ասպէ՛ն յայտնի բան է՝ թէ նոյլին իսկ գործող պապականները (կամ անդրաբնականները) կաթողիկեայ լինելէն կդադարին: Եթէ այժմու հռովմէական եկեղեցւոյ անդամները իրենց եկեղեցիէն դուրս կհամարին հին կաթողիկոսները՝ որ յուլիսէն առաջ իրենց եղբարքն էին, միայն անոր համար որ սոքա չեն կամենար արդէն ընդունուածներէն դուրս բան մը քարողել, այլ ընդունուած բաները ամբողջ եւ անկորուստ

պահպանել. ոչ ապաքէն ըստ ամենայնի բացայայտ բան է՝ որ այժմու հռովմէական եկեղեցւոյ անդամները ընկալեալ վարդապետութեան աւանդը խարդախելով՝ նոյն իսկ կաթողիկէութենէ կբաժնուին, կգատուին իրենց այն եղբայրներէն՝ որ ընկալեալ վարդապետութեան հաւատարիմ մնացած են, եւ ուղղակի հերետիկոսութեան մէջ կընկնին: Ռարձեալ կըսեմք, զի կայ որ չտեսնէ թէ հռովմէական եկեղեցին 1870ին յուլիսի 18էն ետեւ արած յեղափոխութեամբը եղաւ եկեղեցի բոլորովին հակառակ կաթողիկէ եկեղեցւոյ, ոչ եւս այս սկզբան վրայ հաստատուած՝ թէ հաւատոյ ճշմարտութիւնը ընդհանրական ճշմարտութիւնն է, այն ճշմարտութիւնն է որ բոլոր աշխարհք ամեն ժամանակ ընդունած է, հապա այս նոր սկզբան վրայ՝ որ բոլորովին առաջնոյն ներհակն է, թէ հաւատոյ ճշմարտութիւնն է միայն մէկ մարդու խօսքը, պապին խօսքը:

Մէկ խօսքով, կաթողիկէ սկզբունքը այս է՝ թէ պապը ոլիտի համաձայնի ընդհանրական եկեղեցւոյ դաւանութեանը անոր ներհակ՝ այժմու հռովմէական եկեղեցւոյ էական սկզբունքը այս է՝ թէ ընդհանրական եկեղեցւոյ դաւանութիւնը պէտք է համաձայնի պապի խօսքին: Ապա ուրեմն այժմու հռովմէականութիւնը ոչ միայն կաթողիկէութիւն չէ, ընդհանրականութիւն չէ, հապա նաեւ պապական անձնականութիւն է, եւ հետեւաբար կաթողիկէ հաւատոյ հիմնայատակ կործանում:

Դ.

Թէ Ենչլէս հաստատական էկեղեցին «Լ» է
Ս.Ռ.Ա.ՔԵԼԱԿԱՆ.

Հռովմէական եկեղեցին ինչպէս որ ոչ մի է, ոչ սուրբ եւ ոչ ընդհանրական, անսխալական ալ չէ:

Եթէ առաքելական լինէր, պէտք էր որ յառաքելոց իջեալ լինէր, եթէ ոչ առանց պատահական վտիփոխութեանց ըստ ձեւոյն, գոնէ առանց հիմնական այլափոխութեան, այս ինքն՝ այնպէս որ իւր այժմու վարդապետութիւնները, նմանապէս այժմու բարոյականը, կարգ կանոնը, աստուածապաշտութիւնը, եւ ասոնց ամենուն կանոնները՝ հաւատացուած, ընդունուած եւ ի գործ դրուած լինին առաքելներէն:

Արդ ամենէն աւելի վաւերական ճանցուած պատմութիւնը յայտնի կերպով ասոր հակառակը կցուցընէ:

Եւ յիրաւի, պատմական եւ աստուածաբանական մեծ գպրոց մը կայ՝ նոյն իսկ արեւմտեան եկեղեցւոյ մէջ, որ կը հաստատէ թէ պապին նախագահութիւնը հիմնուած է միայն եկեղեցական իրաւանց վրայ՝ առաջին տիեզերական ժողովոց հաւանութեանը վրայ, Հռովմ քաղաքին աշխարհագրական եւ քաղաքական դրիցը վրայ, հիմնեալ սովորութեան մը վրայ: Սուրբն Երանոս գեղեցիկ կերպով կբացատրէ այս սովորութիւնը, եւ Նիկիոյ, Կ. Պօլսոյ ու Քաղկեդոնի ժողովներուն խօսքերը ամենեւին տարակոյս չեն վերցընէր: Այս կարծիքս ունեցողները կհաստատեն թէ

առաքելոց մէջ նախապատուութեան խնդիր ամենեւին չէ եղած, եւ առոր ամենեւին հետքը չկայ՝ ոչ Քրիստոսի առ սուրբն Պետրոս առած խօսքերուն մէջ, ոչ միւս առաքելոց սրբոյն Պետրոսի հետ ունեցած վարմունքին մէջ, եւ ոչ սրբոյն Պետրոսի միւս առաքելոց հետ ունեցած վարմունքին մէջ: Ապա ուրեմն այն դպրոցին խօսքերուն նայելով, որ հաստատուած է անհերքելի փաստերով, ինչպէս որ պիտի ցուցնեմք, այժմու հռովմէական եկեղեցւոյ սահմանադրութիւնը, կարգաւորութիւնը եւ վարդապետութիւնները բացարձակապէս հակառակ են առաքելոց ժամանակներուն սահմանադրութեանը, կարգաւորութեանը եւ վարդապետութեանը:

Բայց գնեմք թէ պապին նախապատուութիւնը կամ նախագահութիւնը իրօք յաստուածային իրաւանց լինի, այս ինքն ի Քրիստոսէ հաստատուած եւ յառաքելոց րնդունուած. դարձեալ անժխտելի կերպով ապացուցեալ է, ինչպէս որ ամենայն քրիստոնեայ եկեղեցիք կընդունին՝ բացի անդրալեռնականներէն՝ թէ պապին այս նախապատուութիւնը ամենեւին *Գերագահութիւն* չէ, այլ պարզ նախաթու լինելը եկեղեցւոյ կառավարութեանը մէջ. որով թէպէտ պապը կլինի եկեղեցւոյ օրինացը առաջին պահպան, բայց ոչ *Դատարար* եւ ոչ կառավարիչ եկեղեցւոյ: Ապա ուրեմն նաեւ ըստ երկրորդ կարծեաց՝ այժմու հռովմէական դաւանութիւնը ոչ միայն առաքելոց դաւանութիւնը չէ, այլ եւ հակառակ է անոր:

Բայց դարձեալ կրեմք. այդ երկրորդ կարծիքը իւր բոլոր պէժը կկորսոնէ այն ապացոյցներուն առջեւ, որ առաջնոյն հիմունքն են. վասն զի ենթադրելով թէ Քրիստոս առաջնութիւն մը տուեր է սրբոյն Պետրոսի, հարկ էր ցուցնել թէ այս առաջնութիւնը պիտի անցնէր նաեւ պապին. իսկ այս բանը անժխտելի կերպով հաստատուելու համար՝ հարկ կլինի ցուցնել նախ թէ սրբոյն Պետրոսի առաջնութիւնը ոչ էր պարզապէս անձնական արտօնութիւն մը, հապառարկին անցնելու պաշտօն մը. երկրորդ՝ թէ իրօք սուրբն Պետրոս չփոխարեց կամ չտուաւ այս առաջնութիւնը ոչ Անտիօքայ եկեղեցւոյն, եւ ոչ Ալեքսանդրիոյ, հապա Հռովմայ եկեղեցւոյն, զոր ինքը չէր հիմնած. երրորդ՝ թէ եթէ Հռովմայ եկեղեցւոյն աւանդեց առաջնութիւնը, ըստ ինքեան ոչ եթէ եկեղեցւոյն էր օր աւանդեց, այլ միայն նոյն եկեղեցւոյ եպիսկոպոսին: Ամեն մարդ ալ կտեսնէ որ ասոնք անյաղթելի դժուարութիւններ են հռովմէականաց դպրոցին համար, եթէ կամենան վաւերական ապացոյցներ փնտռել. եւ այս դժուարութիւնները կարելի չէ վերցնել ու խնդիրը յօգուտ պապին վճռել. բայց եթէ ասով՝ որ սովորած եմք՝ եղած վերջացած գործերը ընդունել իբրեւ իրաւացի բաներ: Ապա ուրեմն այժմու հռովմէական կարծիքները մինչեւ առաքելոց ժամանակներուն չեն հասնիր:

Եւ սակայն հռովմէական եկեղեցին բան մը ունի որ առաքելոց ժամանակէն է. տես թէ ինչ կերպով. Հռով-

մէտական եկեղեցւոյ մէջ պէտք է դանա-
զանել նորա հոգին եւ գրութիւնը:

Այժմու հռովմէականութեան հոգին
երկու տեսակ տարերքէ կազմուած է.
մէկն է Քրիստոսի ժամանակին ժողո-
վարանին հրէական տարրը, եւ միւսը՝
նոյն ժամանակի հին Հռովմ՝ քաղաքին
հեթանոսական տարրը: Սուրբն Պետ-
րոս: որ Հրէաստանէն Հռոմ՝ եկաւ, այս
երկու տարերաց իրարու հետ միանալուն
ճիշտ օրինակն է: Ով որ անկողմնասէր
ոգևով քննել կամենայ հռովմէակա-
նութիւնը, իրաւ որ կգտնէ մէջը հրէա-
կան օրէնսդրութեան հոգին, որ ար-
դարութեան այնչափ ուշադրութիւն
չէր ընել, եւ կբաւականանար արտա-
քին պարտուց վախկոտ կատարմամբ.
այն կարճատես փարիսեցիութիւնը՝ ո-
րոյ առջեւը խղճմոռանքի մաքրութիւնը
ոչինչ էր, իսկ ձեռաց մաքրութիւնը
ամեն բանէ վեր, այն խաբէական եւ
անբարոյական ձեւակերպութիւնը՝ որ
ծանր ծանր նիւթերու մէջ ալ գաղա-
փարը խօսքին կողհէր, եւ ներքին իս-
կութիւնը արտաքին ձեւացման, այն
գալրաց պաշտօնակալութիւնը՝ որ աս-
տուածային իշխանութեան՝ երկնային
կառավարութեան տեղը կուգէր բռն-
նել, եւ մարդկանց հոգիները այն կեր-
պով կկառաւարէր որ իբր թէ անոնք
անշարժ նիւթեր լինէին, եւ ինքը իշ-
խանութիւն ունենար զանոնք առնելու
կամ ձախելու, այն հեթանոսական
կերպերը յատուած պաշտութեան եւ
ի ջերմեռանդութեան՝ որ զԱստուած
նուաստացնելով՝ մարդուս խեղճու-
թեանը ատիճանին կհասցընէր, աւելի

կջանար մարդուս զգայականութեանը
հետ խօսիլ՝ բան թէ հոգւոյ հետ, ու
ներքին աստուած պաշտութեան վրայ,
եւ վերջապէս թանձրամիտ անձինքը
դէպի աւելորդապաշտութիւն կտանէր,
իսկ բարակամիտները դէպի անտարբե-
րութիւն, այն եկեղեցական դասակար-
գութիւնը՝ որ ամենուն վրայ կուգէր
տիրապետել, այն կեդրոնացուցիչ բա-
ցարձակ իշխանութիւնը՝ որ ամեն բան
կուգէր կըլլել ու լափել, այն բաղձան-
քը եւ ջանքը՝ որ մարդկային ազգը մի-
միայն գլուխ մը ունենար, այն կրօնա-
մոլութիւնը՝ որ քաղաքներուն կրակ
կուտար եւ ամբողջ ժողովուրդներ կը-
ջարգէր՝ իւր փառասիրութիւնը կըշ-
տացնելու, եւ տեսած՝ երազները իրա-
գործելու համար: Ատենով Ներոն մը
կար՝ որ Հռոմ քաղաքին կրակ առած
այրիւր կտեսնէր ու ինքը իբր յաղթա-
նակաւ քնարը ձեռք առած կնուագէր
ու կերգէր. իսկ այժմ՝ անգրալեռնա-
կան թագաւոր մը կայ՝ որ ինքզինքը
փոխանորդ Աստուծոյ կհրատարակէ,
եւ եպիսկոպոսներուն հետ, որ իրեն
ծառաներն են, մէկ բերան կկանչէ,
տեսնելով այնքան հոգւոյ եւ ազգաց
իրենցմէ բաժնուածը. թող կորսուին
ժողովուրդները, բաւական է որ մեր
վարդապետութիւնը սահմանուի. կո-
րիցեն ժողովուրդը, միայն թէ սահ-
մանեցի վարդապետութիւնս:

Այս է ահա այժմու հռովմէականու-
թեան հոգին, որ դէմ ընդ դէմ հա-
կառակ է այն կաթողիկէ քրիստոնէ-
ութեան հոգւոյն՝ որոյ աղբիւրք աւե-
տարանն է:

Այս հոգին առաջին դարերուն մէջ խղճուած էր՝ նախ աւետարանին զօրութեամբը որ այն ատեն կ'արդայրէր, եւ ապա այն կրօնական ազատութեամբ՝ զոր Քրիստոս տուած էր հոգւոյ, եւ զոր սուրբ գրոց կ'արդայրմունքը կ'ազայանէր, եւս եւ այն դրժուարութիւնները՝ զոր կ'քաշէին սպառնալից հալածանաց ժամանակները, եւ հաղորդակցութեանց ծանր կերպով լինելուն պատճառաւ՝ եթէ կամենային այն ժամանակները իշխանութիւն մը բանեցնել մասնաւոր եկեղեցեաց վրայ՝ բայց այս անդրալեռնական հոգին ետքերը կ'արողացաւ ժամանակ ժամանակ յայտնել իւր փառամոլ պահանջմունքները, որպէս զի ամենայն եկեղեցեաց գերագոյն կառավարութիւնը ձեռք առնու։ Սակայն ամեն անգամ որ այս բանիս փորձը կ'ընէր, արեւելեան եկեղեցեաց ամենայն եպիսկոպոսները եւ հայրապետները դէմ կ'կենային։ Նոյն իսկ արեւմտեան եկեղեցիները կ'արողացան ընդգրկմանաւ անոր՝ իրենց կ'սիրանոսներուն եւ Օգոստինոսներուն իմաստութեան եւ արիական հաւատոյն շրնորհիւր։

Այսու ամենայնիւ՝ ի քրիստոնէութիւն դարձած բարբարոսներուն տգիտութիւնը, եւ նախնի հաւատացելոյ օրէ օր պաղիլը դիւրութիւն տուին Հռովմայ եկեղեցւոյն դպրացն ու փառիտեղոցը՝ իրենց անձնավարական եւ բռնաւորական վարդապետութիւնները տարածելու։ Եւ այս վարդապետութիւնները ուրիշ բան չէին՝ եթէ ոչ իրենց փառասիրութիւնը՝ հաւատոյ

մասն դարձած։ Եւ իններորդ դարուն մէջ տեսնուեցաւ պապական վճիռներու գաղտնախորհուրդ՝ հաւաքում մը՝ որ բաւական վարպետութեամբ հնարուած էին, այս մոքով որ մինչեւ այն ատեն անհիմն խօսքերով եւ ամբարտաւան կարծիքներով քարոզուածն էր թերը՝ տեսական ոճ եւ դրութիւն մը ձեւանան։ Այն Բաղդորեան սուտ կոնդակները մայր են անդրալեռնական վարդապետութեան, վարդապետութիւն մը որ սարգակէս մարդկային բան է, մարդկային բաներուն ալ գէշը, որոյ մէջ ամենեւին Քրիստոսի եւ առաքելոց վարդապետութիւնը չկայ, եւ ժի դարուն դպրոցներուն մէջ ուրիշ կերպով չէ մըտած, եւ այժմու կատարելութեանը ուրիշ կերպով չէ հասած, բայց եթէ անընդհատ խարդախանքներով, որոց վերայ ըստ ժամանակին լիալի տեղեկութիւն պիտի հրատարակուի։ Քանի որ այն հրատարակութիւնը չէ եղած, բաւական համարիմը յորդորել ծանրադուլս անձինքը, եթէ կուզեն այս նիւթիս հրատարակել, որ կարգան Յանոսի գրուածքը «Յաղագս Պապին եւ Ժողովոյ Նորա»*)։

Եւ մանաւանդ այն կարծեցեալ սրտանխանը՝ որ իբր թէ տուած է անոր Հեռկներէ օթէն։ Դաղդիոյ մէջ Ինչիլե եւ լը Մօն* լրագրաց պապականները շատ կանչուըւտեցին Յանոսի գրածքին դէմ, բայց մէկն ալ գիրքը կ'արդացած չունի։ մենք լաւ գիտեմք թէ ինչ կերպով կ'շարժէին նոքա իրենց

(*) Տես Հայերէն Պարգմանութիւնը տպագրեալ ի Ս. Եջմիածին։

յօդուածները: Իսկ Հեռկենրէօթեռի պատասխանը ոչ միայն չի հերքեր Յասարը, այլ եւ կհաստատէ իւր խոսքը: Իսկ իւր տկարութեամբ մէջ բերած կցկրտութիւնները անդադար կր խախտուակուն իրենց մէջէն դուրս ձգուած կտորներովը, եւ որչափ ալ որ փչեն սուեցընեն անոնցմէ մնացած կրտորուանքը, այն կտորները չկարենալով այնքան գարշահոտ օդին դիմանալ՝ շուտ շուտ կծարին: Իսկ իրենց մէջ:

Ապա ուրեմն հռովմէական դրութեան աղբիւրը ամենայն կերպով յայտնի է, եւ մինչեւ ցայժմ ծածուկ մնացած ապացոյցներուն հրատարակուելովը օրէ օր աւելի դուրս կելլէ անոր ըրած յառաջագիմութեանց պատմութիւնը: Թող Վատիկանը որքան կրնայ փակէ իւր ծածուկ դիւանները՝ իմաստնոց դէմ, իմաստունները երբ եւ իցէ պիտի մոտեն անոնց մէջ. իսկ առ այժմ ամենայն բարեմիտ մարդ այս կասէ ինքն իրեն. եթէ այն դիւաններուն մէջ միայն անդրալեռնականաց նպաստաւոր գաղտնիքներ կան, ինչո՞ւ համար այդքան յամառութեամբ կծածկէ զանոնք անդրալեռնական պապը: Եւ ի՞նչ պատճառաւ այնքան խստութեամբ կվարէ իւր գրապետները՝ երբոր կիմանայ թէ նորա ճշմարտութիւնը նորա հրամանէն վեր կգնեն, եւ կամք կըցուցընեն անկեղծութեամբ վարուելու: Մէկ կարգադրութիւն մը որ հիմնուած է ճշմարտութեան վրայ, եւ ինքզինքը աստուածային կարգադրութիւն կհամարի, ամենեւին բան մը չի ծածկեր, վասն զի ծածկելու բան ալ չունի. ամեն բան

կյայտնէ՝ դուրս կգնէ, վասն զի ի լոյս ընծայելով՝ ճշմարտութեան բարեկամները աւելի իրեն կողմը կբաշէ: Ընդհակառակն՝ եթէ այն կարգադրութիւնը ճշմարտութեան բարեկամներուն դէմ ինքզինքը կբանտարկէ, ըսել է թէ լի է ստութեամբ, եւ խաբէութեան վրայ հիմնուած է:

Արդ ո՞չ ապաքէն այս իսկ է Վատիկանին հին եւ նոր ժամանակակից սլառմութիւնը:

Վայ ձեզ դպրաց եւ փարիսեցւոց նոր ժողովարանիդ հրէից. վասն զի Քրիստոս ոչ այնչափ հին Սինակոկային դպիրներուն վայ տուաւ՝ որչափ ձեզի երբոր ասաց այս խօսքս թէ «վայ ձեզ դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց, վասն զի դուք մարդկանց առջեւ երկնից արքայութիւնը կփակէք. դուք չէք մտնել, ուրիշներուն ալ չէք թողուր որ մտնեն»: Վայ ձեզ վարդապետք օրինաց, վասն զի գիտութեան բանալին առեր էք, եւ դուք մէջը չէք մտած, մտնել ուղղողներն ալ մէկդի կվարէք»:

Ե.

Թէ ինչպէս հռովմէական եկեղեցին
ՀԵՐԵՏԻԿՈՍ է:

Մինչեւ ցայժմ ըսածներէս կտեսնուի որ այժմու հռովմէական եկեղեցին ոչ մի է, ոչ սուրբ, ոչ ընդհանրական եւ ոչ առաքելական. ուստի Քրիստոսի ճշմարիտ եկեղեցւոյն նշաններէն մէկն ալ չունի. եւ եթէ Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին չէ, ուրեմն յայտնապէս հեշտութիւն ու հերձուածող է:

Երկրորդ — Իրօք հերետիկոս է այն մարդը՝ որ յայտնադէս կխանգարէ յայտնեալ վարդապետութեան աւանդը: Այս ճշմարտութիւնը սկզբնական ճշմարտութիւն մի է՝ որ անպնդանքի կարօտ չէ: Աւրիշ կողմանէ, երկուս կերպով կարելի է խանգարել Իրօք յայտնեալ վարդապետութեան աւանդը՝ մէկ մը պակսեցընելով, մէկ մ'ալ աւելցընելով:

Յայտնեալ վարդապետութիւն մը բան պակսեցընելով խանգարելը՝ այն վարդապետութեան բան մը դուրս ձգել է. այսպէս ըրած են ընդհանրապէս բողոքականները, մէկ դի՝ ձգելով հաւատոյ այնպիսի մասունք որ տիեզերական եկեղեցւոյ մէջ ամեն ժամանակ ճանչցուած են իբրեւ մասունք հաւատոյ:

Յայտնեալ վարդապետութիւն մը յաւելուածով խանգարելը՝ անոր վրայ նոր բան աւելցընելն է: Եւ յիշաւի ինչպէս որ Ռազզիոյ Մոլէէն քաղաքին գերապառլե Եպիսկոպոսը կգրէր. «Հաւատոյ աւանդը ամեն մարդու յայտնի է ամբողջութեամբ: Եւ եթէ չեմք կրնար անկից բան մը պակսեցընել, չեմք կրնար նաեւ բան մը աւելցընել վրան»^(*): Ո՞վ կայ որ չգիտնայ՝ որ մոլորութիւնը թէ՛ չափազանցօրէն ըստած ճշմարտութիւն մի է, եւ թէ՛ վրայէն բան պակսեցուցած ճշմարտութիւն: Եւ յայտնեալ ճշմարտութեան վրայ տեսնուած որ եւ իցէ մոլորութիւնը հերետիկոսութիւն է: Ապա ուրեմն հերետիկոսութեան

թիւն է՝ թէ՛ չափազանցութիւն մը ընելը յայտնութեան վրայ, եւ թէ՛ յայտնութիւնը պակսեցընելը: Հերետիկոսութիւն է՝ հաւատոյ սրբազան աւանդին վրայ բան աւելցընելը, ինչպէս նաեւ նոյն աւանդէն բան պակսեցընելը:

Եւ յիշաւի. նոր աւելցուած վարդապետութիւն մը, որ դնեմք թէ ոչ սուտ է եւ ոչ ամբարշտական, ոչ ապաքէն ըստ ինքեան մարդկային բան է: Ասոր տարակոյս չկայ: Աւրեմն այդպիսի յաւելուած մը ընողը՝ յայտնեալ ճշմարտութիւնը որ ըստ ինքեան աստուածային աւանդ է՝ մարդկային բան կը դարձնէ, աստուածային խօսքի տեղ դնել կուտայ բոլորովին, ու մարդկային խօսքը՝ Աստուծոյ իմաստութեանը կընծայէ: այնպիսի վարդապետութիւն մը որ ուրիշ բան չէ՝ եթէ ոչ մարդկային խելքի ծնունդ: Արդ ոչ ապաքէն ասով յայտնութեան աւանդին նոյն իսկ էութիւնը կ'իյնալի, կ'ալալի, կ'ապականի ու կ'իյնալի: ոչ ապաքէն ասով մարդը Աստուծոյ տեղ կ'ընդունի:

Դնեմք թէ նոր աւելցուած վարդապետութիւնը ըստ ինքեան ճշմարտ է. բայց ոչ ապաքէն այդ յաւելուածին մէջ բնական կերպով ծանր ստութիւն մը կ'ընտելի, որ է այս՝ թէ այն վարդապետութիւնը ի Բրիստոսէ յայտնեալ է եկեղեցւոյ, եւ թէ եկեղեցին միշտ այն կերպով հաւատացեր է: Եւ այդ ստութիւնը, որ խարդախանք է պատմութեան, եւ հայհոյութիւն ընդդէմ Աստուծոյ, ոչ ապաքէն ինքնին բաւական է ի բարկութիւն շարժելու զամենայն մարդ՝ որ անկեղծ բարեկամ է

(*) «Շրջադարձական նամակ» ի 26 փետրուարի 1855, յաղագս ընթերցման Իւնիվէս լրագրոյ» էջ 5:

ճշմարտութեան: Անկից ալ աւելի, ի՞նչ պիտի ըսեն յայտնեալ ճշմարտութեան աւանդին ճշմարտ պահապանները՝ երբ որ այն աւանդին վրայ աւելցուի ո՛չ թէ մարդկային ճշմարտ վարդապետութիւն մը, հապա մարդկային վարդապետութիւն մը սուտ, ամբարշտական, ամենայն ուղիղ սկզբանց քանդիչ, թէ եկեղեցւոյ վնասակար եւ թէ մարդկային ընկերութեան: Տարակոյս չկայ որ այսպիսի յաւելումը ապականութեան եւ խանգարման յետին աստիճանն է, եւ այս խանգարումը շատ աւելի ծանր է՝ քան թէ բան մը պակսեցընելով եղածը. վասն զի երբոր մէկը բան պակսեցընելով խանգարէ յայտնութիւնը, Աստուծոյ խօսքը կամփոփէ, եւ կքիչցընէ այն ճշմարտութիւնները՝ զոր Աստուած բարեհաճեր է մարդկանց սովորեցընել, մինչդեռ նա որ յայտնութեան վրայ սուտ վարդապետութիւն մը կաւելցընէ՝ յայտնեալ ճշմարտութեանց իսկութիւնը կապտականէ, եւ անոնց աստուածային յատկութիւններն անգամ կխարդախէ ու կապականէ: Եւ միթէ ասկից աւելի չարագոյն հերետիկոսութեան մէջ ընկնելու կէտ մը կըրնայի գտնուիլ:

Արդ ո՛չ ապաքէն անդրալեռնականաց բռնած ճամբան այս է: Իրաւցընէ, այս միջոցներուս հռովմէական եկեղեցւոյն ըրածը ի՞նչ բան էր: Քրիստոնէական յայտնութեան աւանդին վրայ աւելցուց պապին անսխալականութեան եւ ամենակարողութեան վարդապետութիւն մը՝ որ ոչ միայն աւետարանին յարմար չէ, այլ եւ բոլորովին հակառակ է աւե-

տարանին: վարդապետութիւն մը՝ որ ոչ միայն հաստատուած չէ ի Հարց սրբոց՝ իբրեւ ճշմարտութիւն, այլ եւ հերքուած է անոնցմէ՝ իբրեւ մոլորութիւն. վարդապետութիւն մը՝ որ ոչ միայն մարդկային է, հապա նաեւ մոլորական, հակառակ քրիստոնէութեան, հակառակ կաթողիկէ եկեղեցւոյ, մէկ քանի մարդկանց փառասիրութենէն հնարուած, ստութեամբ ու խաբէութեամբ տարածուած, տգիտութենէ ու կրօնամոլութենէ պսակուած: Եւ այս այն կերպով՝ որ այժմուս հռովմէական եկեղեցւոյ անդամ լինել կամեցողը պարտական է յամենայն զօրութենէ եւ ի բոլոր սրտէ ընդունիլ՝ այն տեղը ուր որ գԱստուած խաբել չլինիր՝ իբրեւ վարդապետութիւն իրապէս յայտնեալ յԱստուծոյ եւ իրօք հաւատացեալ յամենայն դարս քրիստոնէութեան ի բովանդակ եկեղեցւոյ. այն բանը՝ զոր հռովմէական եպիսկոպոս մը 1870ին յուլիսի 18էն առաջ կանուանէր «Անձնապանութիւն եկեղեցւոյ»¹⁾. այն բանը՝ զոր ինքն իսկ Տիւփանլու եպիսկոպոսը կհամարէր «Անլուր եւ այլանդակ անտեղութիւն»²⁾. այն բանը՝ զոր աստուածաբանից մէջէն իմաստնագոյնքը կհամարին մինչեւ ցայժմ՝ Մառսէնին հետ ի միասին՝ իբրեւ «խանգարումն եւ ապականութիւն ոչ միայն պատմու-

(1) Տես «Հաւաքումն դիտողութեանց» (Synopsis observationum), №. 154:

(2) Անդ, №. 22:

թեան, այլ եւ աստուածային յայտնութեան *):

Ապա ուրեմն այժմու հռովմէական եկեղեցին դրականապէս հերետիկոս է իւր վարդապետութեանը մէջ:

Գարձեալ կըսեմք. այս տեղ մեր խօսքը ոչ մարդկանց վրայ է եւ ոչ այլ եւ այլ խղճմտանաց, հապա միայն վարդապետութեանց եւ գործող վրայ: Ամենայն մարդ՝ ով որ եւ իցէ՝ Աստուծոյ կապականի, իսկ վարդապետութիւնները կապականին գիտութեան, եւ գործողութիւնները պատմութեան: Ուրեմն մենք մարդկանց խղճմտանքները Աստուծոյ կ'յանձնեմք. այլ եւ կ'հաւատամք՝ թէ այժմու հռովմէական եկեղեցւոյ մէջ շատ մարդիկ կան որ չբախտալով թէ ինչ բաներ կ'իյնին, սուրբ են, եւ անստատան կերպով եկեղեցւոյ հոգւոյն հետ միացած. մենք ոչ մէկ անձի մը նոյնք չեմք կարգար. եղբօր պէս կ'սիրեմք այն ամենայն անձինքը՝ որ անկեղծօրէն կ'սիրեն մեր ամենուս մայրը: Այս ինքն ճշմարտութիւնը: Բայց որքան որ ամենայն ջանք ի գործ կ'ընենք մարդկանց պատիւը պահելու, նոյնչափ եւս հաստատ ոտք կ'իյնեմք որ ծուռ վարդապետութիւններն ու գործողութիւնները խայտառակեմք ու վար դարնեմք: Գարշելի է մեզի համար այն ծպտեալ կամ գիմակաւոր սղարահանդէսը (պահապէ) որ կ'կատարուի եկեղեցւոյ մէջ, եւ սուրբ սեղանոյն բո-

լորտիքը: Ինչո՞ւ համար քիչ մը առաջ չըսին մեզի՝ թէ ինչ էր իրենց միտքը: Ինչո՞ւ համար չարաչար խաբեցին զմեզ ու ատենով այնպիսի հաւատամք մը սովորեցուցին մեզի որ բացարձակապէս հակառակ է այն հաւատամքին որ այսօրուան օրս կուգեն մեզի սովորեցունել: Այժմ որ վերջապէս մեր աչքերը բացուեցան, եւ ոչ մէկ վայրկեան մը յանձն կ'առնուիմք մասնակից լինել որոշութեան եւ հերետիկոսութեան, յիշելով եւ յիշեցնելով ամենայն շնչ հաճեցելու ի կարգէ քահանայից եւ եպիսկոպոսաց. եսայի մարգարէին այն խօսքը թէ «Վայ ինձ որ լուռ կեցայ վասն զի սիրից շրթունք ունեցող մարդի եմ. վայ ինձ զի լուռ եղէ քանզի այր պղծաշուրթն եմ ես *):

Բայց գուցէ ըսէ մէկը՝ թէ որպէս զի մէկ վարդապետութիւն մը հերետիկոսական համարուի՝ պէտք է որ եկեղեցին կամ տրեգերական ժողովը վճռէ թէ այն վարդապետութիւնը անստուծային յայտնութեան հակառակ է. իսկ արդ պապին անսխալականութեան եւ ամենակարողութեան վարդապետութիւնը քչ երբէք գտնանարտուած է ժողովի մէջ, ապա ուրեմն կարելի չէ օրինաւորապէս ըսել՝ թէ այժմու հռովմէական եկեղեցին հերետիկոս է:

Այս առարկութիւնը առջի բերան գորշերը բան մը կերելի, բայց շատ դիւրին է բացատրել անոր ինչ աստիճանի խառնախնդր բան եղածը:

(*) Եսայ. 2: 6:

(5) Stn «Հռենոսեան Հիւրէս» (Rheinischer Merkur) 24 Սեպտեմբերի 1874, էջ 385:

Նախ՝ Կոստանդեան եւ Բասիլեան
Ժողովները իրենց այն դումարմանցը
մէջ զորս հռովմէական եկեղեցին ալ
պէտքս ունի կհամարի՝ վճռեցին ու սահ-
մանեցին թէ «Ամեն մարդ, նաեւ պա-
պը, պէտք է հայտաւոր տիեզերական
Ժողովոյն ի նիւթ հաւատոյ»։ Արդե-
թէ պապը հաւատոյ խնդրոց մէջ Ժո-
ղովոյ վարդապետական հեղինակու-
թեանը տիրի հաւատաւոր, յայտնի բան
է որ անսխալական չէ, այլ եւ ոչ վար-
դապետութեան մը գերագոյն դատա-
ւոր է։ Հասցաւ Ժողովը անկից յերէ եւ
կրնայ նորա սխալը ուղղել։ Եթէ Կոս-
տանդեան եւ Բասիլեան Ժողովներուն
վճիռը այն նշանակութիւնս չունի, ը-
սել է թէ ամենեւին նշանակութիւն մ'
ալ չունի։ Ապա ուրեմն սխալ խօսք է
ըսելը թէ մէկ տիեզերական Ժողով մը
չէ դատաւարտած երբեք իբրեւ հերե-
տիկոսական այն վարդապետութիւնը՝
զոր Վատիկանու Ժողովին վճիռները կը
ստիւրեցնեն։

Բայց զնեմք թէ մէկ տիեզերական
Ժողով մը չէ եղած որ դատաւարտած
լինի այդ վարդապետութիւնը իբրեւ
հերետիկոսական։ Ինչպէս կարելի է հե-
տեցընել՝ թէ իրօք ալ հերետիկոսա-
կան չէ։ Ոչ երբեք, վասն զի նոյն իսկ
հռովմէական եկեղեցւոյ խօսքն նայե-
լով՝ տիեզերական Ժողովներուն ըրա-
ծը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ հրատարա-
կել այն բանը որ արդէն իրօք մասն է
հաւատոյ, մէկ ճշմարտութիւն մը ոչ թէ
անոր համար է մասն հաւատոյ՝ որ տի-
եզերական Ժողովները մասն հաւատոյ
կհրատարակեն զայն, հասցաւ տեղական

Ժողովները հաւատոյ մասն կհրատա-
րակեն զայն անոր համար՝ որ արդէն
իրօք մասն է հաւատոյ, իրօք յայտնեալ
ճշմարտութիւն է։ յայտնեալ ճշմար-
տութեան իսկութիւնը աւելի առաջ է՝
քան թէ Ժողովոց ըրած յայտարարու-
թիւնը, եւ Ժողովոց յայտարարութիւ-
նը կճառայէ միայն հաստատելու զայն
հեղինակօրէն։ Մէկ անգրաւեռնական
մը չկայ՝ որ համարձակի ըսելու թէ ա-
ռաջին տիեզերական Ժողովն առաջ՝
Քրիստոսի աստուածութիւնը հաւատոյ
մասն չէր, որովհետեւ մինչեւ այն Ժա-
մանակը Ժողով մը սահմանուած չէր։
Ցարակոյտ չկայ թէ եթէ մէկը Նիկիոյ
Ժողովն առաջ ուրանար Քրիստոսի
աստուածութիւնը, ամենայն ուղղա-
փառ քրիստոնեայք զինքը հերետիկոսի
տեղ չկենէին, թէպէտեւ այն Ժողովն
առաջ եկեղեցին մէկ սահմանադրու-
թիւն մը ըրած չլինէր այդ վարդապե-
տութեան վրայ։ Ապա ուրեմն թէպէտ
եւ ոչ մէկ Ժողով մը իբրեւ հերետիկո-
սական դատաւարտած չլինի ոչ ուղղա-
կի եւ ոչ անուղղակի պապին անսխալա-
կանութեան եւ ամենակարեղութեան
վարդապետութիւնը, ամենեւին կարելի
չէ անկից հետեւցընել՝ թէ այդ վար-
դապետութիւնը հերետիկոսական չէ,
կամ թէ կարելի չէ օրինաւորապէս հե-
րետիկոսութիւն համարել զայն։

Ինչ բան որ պարտական է մարդ-
ընել օրինաւորապէս կարող է ընել։
Իսկ արդ ո՞ր եւ իցէ քրիստոնեայ ներ-
գործական անգամ լինելով եկեղեցւոյ
պարտական է արթուն կենալ որ ըզ-
գուշութեամբ պահպանուի եկեղեցւոյ

յայտնուած ճշմարտութեան աւանդը: Ի հարկէ հասարակ հաւատացեալը ոչ նոյն կերպով պահապան է այն աւանդին՝ ինչ կերպով որ պահապան են քահանայք եւ եպիսկոպոսունք, եւ սակայն իրօք ինքն ալ պահապան է: Քահանայք եւ եպիսկոպոսունք հեղինակօրէն կհաստատեն հասարակաց հաւատքը՝ իսկ պարզ հաւատացեալք կարող են հաստատել զայն պարսպանօրէն եւ անսխալօրէն: Քահանայից եւ եպիսկոպոսաց մէկ տեղ հաւաքուելով ըրած հաստատութեամբը հասարակ հաւատացելոց ըրած հաստատութեան պակասը կը լցուի: Բայց սոյն տուած հաստատութիւնը հեղինակութիւն չունենալով՝ կարելի չէ ըսել թէ ոյժ ալ չունի: Եթէ քահանայք եւ եպիսկոպոսունք պարտական են հեղինակօրէն խօսելու, առիթից չհետեւիր՝ թէ պարզ հաւատացեալք պարտական են լռելու: Ճշմարիտ կաթողիկէ եկեղեցւոյն մէջ ամենքն ալ պարտական են իրենց ընդունած հաւատքը ջատագովելու եւ հաստատելու, թէպէտ եւ այլ եւ այլ իրաւունքներով եւ իրարմէ տարբեր աստիճաններով: Վասն զի սրբազան բաներուն գիտութիւնը այնպիսի պարգեւ մի է՝ զոր կարող է Աստուած պարգեւել ոչ միայն քահանայից եւ եպիսկոպոսաց, որք միայն ունին իշխանութիւն պաշտօնական իշխանութիւն վարդապետելու, այլ եւ հասարակ հաւատացելոց:

Ուրեմն եթէ հասարակ հաւատացեալ մի չկարողանայ ալ պաշտօնական հեղինակութիւն մը տալ իւր դատողութեանցը, սակայն ճշմարտութիւնը միշտ

ճշմարտութիւն է՝ ուսկից ալ ունենայ իւր ծագումը, եւ միշտ ունի իւր հետը այն ստուգութեան սրբազան հեղինակութիւնը՝ որոյ աղբիւրը ինքն իսկ է, եւ որոյ դէմ անկեղծ մարդ մը չկայ որ կարողանայ աղծումբել: Այսպիսի դատողութիւնները պարտաւորիչ չեն համարուիր պաշտօնական իշխանութեան հեղինակութեան, բայց պարտաւորիչ են անսխալօրէն իշխանութիւնը չուննալէն: Իսկ ճշմարտութեան ապագութեան ո՞չ ապաքէն պարտաւորիչ պէտք է համարել զանոնք այն մարդուն՝ որոյ առջեւը համաձայն են ճշմարտութեան: Անտարակոյս. վասն զի ի՞նչ մտածելու է այն մարդուն վրայ՝ որ կըսէ թէ «Այս գործողութիւնը իրօք չար է ըստ ինքեան. բայց որովհետեւ օրէնսդրական իշխանութիւնը դեռ արգելած չէ զայն պաշտօնական իշխանութիւնը (ex professo), կարող եմ գործել: — Այս ինչ վարդապետութիւնը յայտնապէս մոլորական է. բայց որովհետեւ ուսումնական հեղինակութիւնը դեռ չէ դատապարտած զայն պաշտօնապէս, կարող եմ ես ընդունել զայն: — Պապին անսխալականութեան եւ ամենակարողութեան վարդապետութիւնը յայտնապէս հակառակ է յայտնութեան. բայց որովհետեւ վարդապետական հեղինակութիւնը դեռ չէ դատապարտած զայն յանգիստ, կարող եմ ես հաւատալ անոր, կամ ուրիշներուն հաւատացածին հաւանել»: Այսպիսի տրամաբանութիւնը տարակոյժ չկայ որ բացարձակապէս սխալ ու մոլորակոն է:

« Եթէ իմ ըսածս ճշմարտութիւն չէ, կըզրէ Լապօրտ քահանան, խօսքիս մտիկ մ'ընէք, մերժեցէք զիս, արհամարհեցէք, ոտնակոխ ըրէք, Իսկ եթէ ըսածս ճշմարտութիւն է, եթէ ձեր խղճմբտանքն ալ նոյնը կ'իջեալորէ ձեզի, չէք կրնար ինձի չհետեւիլ, վասն զի հրաման չունիք դուք հաւատոյ եւ բարոյականի վերաբերեալ նիւթոյ մէջ ճշմարտութիւնը մերժելու: Եթէ իմ խօսքերուս մէջ կայ ճշմարտութիւն, ոչ եթէ ինձի հետեւած կ'լինիք, հապա ճշմարտութեան, հապա նմին իսկ Աստուծոյ, որովհետեւ Աստուած միայն է ճշմարտութեան աղբիւրը: Թող իմ փոքրիկութիւնս ձեզի համար գայթակղութեան պատճառ չլինի: Եթէ ձեր խղճմտանքը այնպէս կ'առատէ՝ թէ ձեզի ըսածս ճշմարտութիւն է, դուք ոչ եթէ աստիճան եւ անուն չունեցող մարդու մը հետեւած կ'լինիք, հապա անոր որ ըսաւ. « Ես եմ ճանապարհ եւ ճշմարտութիւն եւ կեանք. ոչ ոք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինեւ », այս ինքն ոչ ոք արքայութիւն կ'մտնէ՝ բայց եթէ իմ ձեռքովս: Լաւ նայեցէք ուրեմն առաջի ամենակալին Աստուծոյ՝ որ պիտի դատէ օր մը զամենայն մարդ ըստ վկայութեան (սղծի նորա *):

Քանի որ յիշաւ տիեզերական ժողով մը չէ դատապարտած անդրալեռնականաց ամենայն հերետիկոսութիւնները, որ եւ իցէ ուղղափառ մարդ կըրնայ ու պարտական է դուրս հանել զա-

նոնք ուսումնական կերպով, եւ դատապարտել յանուն նոյն իսկ յայտնութեան, որոյ ինքը պահապանն է, եւ այն հերետիկոսութիւնները նոյն յայտնութեան խանգարմունքն են՝ դեռ ժողովական վճիռ մը չելած:

Բայց գուցէ գտնուին երկիւղած անձինք որ ըսեն ինձի. ի՞նչպէս կրնաս հերետիկոս անուանել այն ամենայն սուրբերը, որ եղած են եւ կան տակաւին հռովմէական եկեղեցւոյ մէջ:

Նախ մինչեւ 1870ին յուլիսի 18 չկայ եւ ոչ մէկ սուրբ մը հռովմէական եկեղեցւոյ մէջ՝ որ դաւանած լինի պապին բացարձակ անսխալականութիւնը իբրեւ վարդապետութիւն հաւատոյ. շատ սուրբեր կան որ հակառակեր են անոր՝ իբրեւ ընդդէմ մոլորութեան, թէ ուղղակի եւ թէ անուղղակի. ետքի ժամանակներս շատերը ընդունեն են տեսակ մը անսխալականութիւն վերջերս եւ յայտնական, բայց ոչ երբէք ըսած են թէ այս վարդապետութիւնը ուրիշ բան է, եւ ոչ պարզ կարծիք, կամ ճշմարտութիւն՝ արտաքոյ մասանց հաւատոյ: Ապա ուրեմն մենք հռովմէական եկեղեցւոյ եւ ոչ մէկ սուրբը չեմք դատապարտեր իբրեւ հերետիկոս յայտ մասին մինչեւ յուլիսի 18ը 1870:

Ընդհակառակն, այժմու հռովմէական եկեղեցւոյն կրննի՝ հերետիկոսի տեղ դնել իւր բոլոր հին ատենի սուրբերը, եթէ ոչ տեսական՝ գոնէ նիւթական հերետիկոս համարելով զանոնք. վասն զի ի՞նչ բան որ մասն է աստուածային հաւատոյ, նոյնպէս եղած է միշտ. վասն զի յայտնեալ ճշմարտու-

(*) « Քննութիւն 22 առաջարկութեանց ապականեալ բարոյականի ». Փարիզ, 1843:

թիւեր մի եւ նոյն է ամեն ժամանակ։
Եւ եթէ մէկը իրօք հերետիկոս է այսօ-
րուան օրս՝ ուրանալով պապական ան-
սխալութեան եւ ամենակարողութեան
նորահնար վարդապետութիւնները, ու-
րեմն նոյնպէս հերետիկոս էին ամենով
ամենեքեան նօքա որ չէին ընդուներ
այս քանս իբրեւ մասն նստուածային
հաւատոյ։

Իսկ այժմու ժամանակս մենք նիւ-
թական հերետիկոս կհամարիմք հռով-
մէական եկեղեցւոյ այն ամենայն ան-
դամները՝ որ բարեմտութեամբ կըն-
դունին այն նորահնար վարդապետու-
թիւնները՝ բոլորովին այն կերպով՝ ինչ
կերպով որ հռովմէական եկեղեցւոյ
անդամները նիւթական հերետիկոսի
տեղ կգնեն ուրիշ քրիստոնեայ ժողո-
վրդոց մէջէն դանսնք որ միամտու-
թեամբ չեն ընդունիր նոյն վարդապե-
տութիւնները։ Դժուարութիւն մը չու-
նիմք խոստովանելու թէ անոնք որ
մենք հռովմէական եկեղեցւոյ մէջ նիւ-
թական հերետիկոսաց տեղ կգնեմք՝
այնքան շատուոր չեն որքան միւսները։
Վասն զի հռովմէական եկեղեցւոյ ան-
դամներուն մէջ քիչ մտրդ կայ որ հա-
ւատայ իրօք ու խղճմտանքով այն նո-
րահնար վարդապետութեանց, թէպէտ
եւ դրսուանց հպատակութիւն ցուցը-
նողները շատ են։ Եւ երբ շատուոր են
կեղծաւորները՝ քան թէ նիւթական
հերետիկոսները։ Բայց դարձեալ կըսեմ՝
առանձին մարդկանց վրայ դատաստան
կտրելը մեր բանը չէ։ Մեր խօսքը վար-
դապետութեանց՝ բանից եւ գործոց
վրայ է։ Եւ կերեւնայ մեզի թէ ըստ

բաւականին ցուցըցինք խօսք հասկըցող
եւ անկեղծ մարդկանց թէ այժմու հը-
ռովմէական եկեղեցին իւր վարդապե-
տութեան ու վարմունքին մէջ իրօք եւ
դրականապէս հերետիկոս է։

(Շարունակել)

Գ. Ա. Ա.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՍՏԻՍՐԱՅԻՆԻԹԻԵՆ.

(Շարունակել)

ՀՈԳԵՂԵՆ ԳՈՅԱՑՈՒԹԻԵՐ ԿԱՍ՝ ՀՐԵՇՏԱԿ.

Անցեալ 3-4 թուահամարներում հո-
գեղէն գոյացութեանց վերայ մասնաւոր
ծանօթութեամբ խօսեցանք՝ առանց
ցոյց տալու թէ ի՞նչ է նոցա բնութիւ-
նը։ Եւ ինչ կատարելութիւններ ունին
այս անգամ նոցա վերայ սխիտ խօսինք։
Սուրբ գրքէն կսորոյնք, որ հրեշտակ-
ները, որ եւ հոգեղէն գոյացութիւնք
իրենց բնութեան կատարելութեամբ
եւ կարողութեամբ մարդկային բնու-
թեան կատարելութենէն եւ կարողու-
թենէն շատ կգերազանցեն։

Մարդկային սեռը, որ իրենց գոյու-
թիւնը պահելու համար սերական աճե-
լութեան կկարօտի, հոգեղէն գոյացու-
թիւնը այսպիսի հանգամանքներէ ա-
զատ, նոյն են՝ ինչպէս եւ որքան ստեղ-
ծուեցան, անփոփոխ վիճակաւ եւ ան-
պակասելի կենօք։ Մատթէոսի ԻԵ, 30
համարում յայտնի կտեսնուի նոյա
բնութեամբ գերազանցութիւնը այն կա-

տարելութեամբ, որ մարդկային ազգը իրեն երկրաւոր նիւթական մարմնոյ թանձրութիւնը մերկանալէն զինի, ի յարութեանն երբ որ հոգեացեալ բնութիւն զգենու, պիտի հաւասարի եւ լինի իբրեւ զհրեշտակս յերկինս: Թ. Պետ. Բ. 11 համարումնոցա բնութեանց գերազանցութեան մասին գրած է: Հրեշտակը դորութեամբ եւ կարողութեամբ քան զնոսա մեծամեծք:

Նոցա գերազանց կատարելութիւնն այն է, որ մարդիկ, որ հազիւ իրենց հորիզոնի մէջ եղածները կիմանան, նոքա իմաստութեամբ եւ գիտութեամբ լըցուած՝ ոչ միայն իրենց մտաւորական հայեցողութիւնը ամեն կողմը զարձնելով, միով անսահման նկատողութեամբ կտեսնեն, այլ եւ կատարեալ ճանաչողութեամբ կըմբռնեն: Այս կատարելութիւնները մեզ իմացնելու մտք Յայտնութեան մէջ կասէ, նոցա չորս կողմերը լի էին աչօք: Իսկ եզեկիէլ նոցա իմացողութիւնը հասկացնելու համար մարդու կերպարանքով կնկարագրէ:

Այլ թէ յոր աստիճան կձգտի նոցա այս իմացականութիւնը, Քրիստոսի այս խօսքէն կիմացուի, որ կասէ. «Ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք յերկինս եւ ոչ որդի», որով ցոյց կուտայ, թէ՛ եւ Աստուծոյ գործոց եւ ոչ մէկը նոցանից կձածկուի: Տես ուրեմն թէ որքան գերազանց են նոքա բնութեամբ քան ըզմարդիկ:

Երբեմն եկեղեցւոյ վարդապետաց մէջ խնդիրք յուզուած է, թէ արդեօք այս իմացական հոգեղէն էակները իբրեւ գոյացութիւն՝ մարմին ունին՝ թէ ոչ:

Այս մասին թէեւ սուրբ գրոց մէջ բացայայտ կերպով գրուած չէ, սակայն սուրբ գրոց մէջ մեկնիչներէն ոմանք իբրեւ հաւանական կարծիք ասած են թէ հոգեղէն գոյացութիւններ՝ բանի որ հոգւոյ վերաբերեալ սուրբգիրքներ ունին, որք են, ուրախութեան արդամութեան եւ երկիւղի կիրք, իմացականութիւն եւ կամք, հարկաւ մարմին էլ պիտի ունենան. բայց այնպիսի մարմին, որ յատուկ է հոգեղէնութեան՝ որ է նոբրը, թափանձիկ, անտեսանելի եւ անըմբռնելի: Պապական աստուածաբանները 787 թուին իբրեւ մի եկեղեցական վարդապետութիւն հաստատեցին, թէ հրեշտակաց մարմինը հրային կամ օդեղէն է, թերեւս Սողմոսէն առնելով, որ կասէ. «Ո՛րարա զհրեշտակս իւր ոգին մեղաշտօնեայս իւր ի հուր կիզելոյ»: Իսկ զպրոցականները, որ Արիստոտելի աշակերտները կհամարուն, Արիստոտելի իմացականութեան համար ասածը թէ աննիւթ է, նորանից հետեւցնելով ասացին, թէ որովհետեւ հրեշտակները իմացական հոգիներ են, յատուկ մարմին չունին, բայց ի հարկաւոր դէպս մարդոց երեւելու համար կնրոզ են օդերեւութի պէս օդէն մարմին զգենու: Այս կարծիքը ընդունելի եղած է իբրեւ հոգւոյ մի յատկութիւն: Գալով նոցա կատարելութեանը, սուրբ գիրքը կիմացնէ մեզ թէ նոքա շատ աշխոյժ արագութիւն ունին, եւ կգործեն սքանչելի կերպով իբրեւ բոց հրոյ, կամ հոգմոյ արագութեամբ: Եւ այս ցուցանելոյ համար նոցա կնկարագրեն թեւաւոր կամ բազմաթեւ:

Յայտնի է, որ նոցա համար այս կերպ նկարագրութիւնը այլաբանութիւն են. որովհետեւ հրեշտակները ոչ թեւ ունին եւ ոչ ոտք, միայն նոցա իմացականութիւնը ցուցանելոյ համար կասուին բազմաչեայ. նոցա աշխոյժ եւ սաստիկ արագութիւնն ցուցանելոյ համար՝ կասուին վեցթեւեան, եւ նոցա ճանաչողութիւնը ցուցանելոյ համար՝ կասուին քառակերպեան:

Այլ թէ նոցա արագութիւնը որ աստիճան է, կարող ենք հասկանալ Դանիէլ մարգարէի պատմութենէն, որ երբ պահօք եւ աղօթիւք առ Տէր կաղաղակէր, պատուէր տուաւ Աստուած Դաբբիէլ հրեշտակապետին, գնալ առ Դանիէլ եւ նորա տեսիլը եւ մարգարէութիւնը բացատրել: Այս հրամանը եղաւ այն ժամուն, որ Դանիէլ կաղօթէր, որ էր մօտ երեկոյեան պահուն, յորում ժամանակի եւ Դաբբիէլ երկընքէն յաշխարհս եկաւ. Ամեն իորհող միտք կարէ իմանալ, որ այս գալու միջոցը մեր ըմբռնումէն եւ ամենազօրաւոր երեւակայեալ արագութենէն ո՞րքան ի վեր է:

Աստղաբաշխական գիտութիւնը կըստուգէ, որ հաստատուն աստղերէն թէ որ լոյսը մեզի գալու լինի՝ բաւական միջոց կ'աշէ, երկինքը՝ ուր հրեշտակներն են, որքան բարձր են երկրէս աստղալից երկինքը, այնքան բարձր է նա եւ աստղալից երկնքից:

Արդ թէ որ Դանիէլի երեկոյեան աղօթքի ժամանակը կ'հասնի Դաբբիէլ եւ կ'մեկնէ նորա տեսիլքը եւ մարգարէութիւնը, իմացիւր թէ որքան արագութիւն

թիւն ունին հրեշտակք իրենց գործոց մէջ:

Հրեշտակաց համար կասէ սուրբ գիրքը թէ են անմահ հոգիք, նոցա անմահութիւնը պարզ հոգեղէնութեան արդիւնքն է, որ նիւթեղէն էակաց պէս խառն նիւթերէ կազմակերպած չլինելով՝ կասուին աննիւթ եւ անմահ:

Կառուի նաեւ անծերանալի բնութիւն, որով կ'իմանամք թէ իրենց գործութիւնը ինչպէս ունեցան յԱստուծոյ նոյնը պահած են եւ պիտի պահեն միշտ եւ յաւիտեան, որոյ մասին կնկարենք նոցա պատկերը ի ձեւ երիտասարդի ինչ կերպարանքով որ տեսանելի եղած են մարդոց:

Աստուածաբանից մէջ խնդիր եղած է, թէ մեր մարդկային հոգին, որ ունիմք, գոյով նոցա պէս հոգեղէն էակ պարզ, անմահ, եւ մշտապէս, արդօք նոցա գոյութիւնը՝ նիւթը եւ տեսալը ունի՞ն թէ ոչ. այս մասին առանձին յօդուածով պիտի խօսիմք:

Հրեշտակաց վերայ այսքան տեղեկութիւն տալէն զինի աւելորդ չեմք համարել իբրեւ ժողովրդական դաստիարակութիւն փոքր ինչ խօսել նաեւ այն կանոնական սովորութեանց վերայ, որ արեւելեան եւ արեւմտեան եկեղեցիները կ'յարգեն հրեշտակաց յիշատակութիւնը եւ նոցա ընդ մեզ ունեցած յարաբերութիւնը եւ պաշտօնը պատուելով:

Յայտնի է, որ Քրիստոսի եկեղեցին միօրինակ սովորութեամբ եւ վարդապետութեամբ երկնային զինուորութեանց եւ նոցա հետ սրբոց յիշատակը պա-

տուելով, բարեխօս կրճէ նոցա առ Աստուած:

Այս սովորութիւնը առնուած է ըստ մեծի մասին նոցա պաշտօնականատարութեանց արգիւնքէն, հիմն ունելով սուրբ գրոց մէջ յայտնեալ այն ճշմարտութիւնները որոնք յամենայն երեւելի դէպք յայտնուած են յԱստուծոյ միջնորդութեամբ նոցա: — Բացայայտ կտեսնուի Սաղմոսի գրուածքէն, որ Աստուածային խնամարկութիւնը ամեն մի մարդոց մի մի հրեշտակաց պաշտօն տուած է պահպանութիւն անել, որ կատարին պահպան հրեշտակք: Մատթէոսի ԺԷ, 10 համարումն նոցա չարախօսութեան մասին, որուն կհետեւի եւ բարեխօսութիւն: յայտնի ասած է ի Քրիստոսէ ուր կգգուշացնէ մեզ չարհամարհել գոք, ի վերայ բերելով պատճառը, թէ հրեշտակք նոցա հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ, որ յերկինս է:

Տօբիթ. ԺԲ, 12—15 համարումն ինքն Ռաիայէլ հրեշտակը, որ յԱստուծոյ ուղարկուեցաւ Տօբիթայի որդւոյ Տօբիային ուղեկցելու, կյայտնէ, «Յորժամ կայեր դու եւ նուն քո Սառայ յաղօթս, ես մատուցանէի զյիշատակ աղօթից ձերոց առաջի Սրբոյն, Աստուծոյ. եւ յորժամ թաղէիր զմեռեալս, ես ընդ քեզ էի. եւ յորժամ ոչ դանդաղեցար յառնել, եւ թողուլ զճաշ քոյ, զի երթիցես եւ ամփոփեսցես զմեռեալն, ոչ մոռացայ զքեզ. եւ յորժամ զբարկս գործէիր՝ ընդ քեզ էի, եւ առաքեաց զիս Աստուած բժշկել զքեզ եւ զնուն քոյ Սառայ: Ես եմ Ռաիայէլ յիշօթանց

անտի հրեշտակաց, որք հանեն եւ մատուցանեն զաղօթս սրբոց, եւ մտանեն առաջի Սրբոյն. նոյնպէս Յայտնութեանը Ը, 3—4, կասէ. «Եւ այլ հրեշտակ եկն, եւ եկաց առ սեղանն եւ ունէր խնկանոց ոսկի, եւ տուաւ նմա խոնկ բաղում, զի մատուցէ զաղօթս ամենայն սրբոց ի վերայ ոսկեղէն սեղանոյն առաջի աթոռոյն Աստուծոյ: Եւ ել ծուխ խնկոցն աղօթք սրբոց ի ձեռաց հրեշտակաց առաջի Աստուծոյ»:

Այսքան յայտնեալ ճշմարտութեանէն (որոց նմանը սուրբ գրոց զանազան տեղերում կգտնուին, եւ որ աւելորդ համարեցինք երկարել) իմանալով եկեղեցին հրեշտակաց եւ սրբոց պաշտօնը եւ առ Աստուած ունեցած համակրութիւնը բարեխօսելու եւ մեր բարեգործութեանց յիշատակը Աստուծոյ նուիրելու, մահմանած է յարգութիւն հրեշտակաց եւ սրբոց:

Բողոքականք եկեղեցւոյ այս վարդապետութեանց հակառակելով՝ անտեղի վարդապետութիւն կհամարեն. եւ այն յարգական պաշտօնը՝ եւ միջնորդ բնութիւն անհիմն համարելով, կասեն. հրեշտակները ոչ ամենութեք են՝ որ մեր աղօթքը լսեն, եւ ոչ ամենազէտ՝ որ իմանան վասն որոյ եւ մեր նոցա աղօթելը եւ միջնորդ բռնելը անտեղի է: Մանաւանդ որ կասեն, նոցա այդ յարգանքը, որ կարուի իրենց, արգելած են այս մասին փաստ կերերն, Յայտ. ԺԹ, 9—10 համարում եղածը, որ Յովհաննէս երբ հրեշտակը տեսաւ, եւ ընկաւ երկրպագութիւն անելու, արգելեց նորա այս գործը, զինքը ծառայակից կո-

չելով: — Այլ եւ կասեն: քանի որ Քրիստոս լստահութիւն տուած է մեզ առ ինքն եւ առ Հայր համարձակութեամբ գիմելու, կարեւոր չէ ուրիշ հակաց միջնորդութեանը գիմել:

Նոցա այս առարկութիւնը թէ ի՞նչ արժէք ունի, յայտնի է, որ մոլորամիտ մտօք աստուածային յայտնեալ ճշմարտութեանց ուղղակի հակառակելէն զատ ուրիշ բան չէ: որ ըստ առաքելոյն «մոլորեալք եւ մոլորեցուցանեն» որոց մասին թէեւ հարկ չկայ խօսել, այլ մեր փողովրդական դաստիարակութեան լրութիւն տալու համար, կասեմ նախ, որ Յովհաննու հրեշտակին երկրպագութիւն անելու արգելքը, Յովհաննու գերագոյն արժանաւորութեան համար էր, որուն եւ ինքն հրեշտակը ծառայակից կկոչէ, յայտնելու համար թէ որքան սիրելի է Աստուծոյ Յովհաննէս եւ սրբացեալ անձն ի Քրիստոսէ:

Գալով միւս առարկութեանը, կասեմք երկրորդ, որ սուրբ գրոց մէջ, շատ տեղեր կտեսնեմք, որ արժանաւորաց եւ սիրելեաց միջնորդութիւնը կոչահանջէ Աստուած այն գէպքերու մէջ, ուր որ մարդիկ կսխալուին, կամ հարկ կլինի մէկին արժանաւորութիւնը միւսէն որոշելու: Կարգա Յօրը ԽԲ, 7—9—10:

Նոյնը Քրիստոսի վերայ եւս կտեսնուի, նա որ Աստուած էր եւ մարդ՝ եւ սրբութեամբ եւ ամենագէտ, եւ առանց յայտնելոյ կամ խնդրելոյ գիտէր կատարել, սակայն Աւետարանի մէջ կտեսնուին, որ իմպրոզայ իբր յանգէտս եւ անխօղ ձեւանալով, թոյլ կուտայ, որ աշակերտաց միջնորդութիւնը խնդրեն:

այսպէս է հրաշագործութիւն ջրոյ ի գինի փոխարկելոյ ի հարսանիս Կանայ Գալիլեացոց՝ միջնորդութեամբ մօրն եղեալ, բժշկութիւն հեթանոս կնոջ՝ միջնորդութեամբ առաքելոց եւլն:

Ապա ուրեմն սրբոց եւ հրեշտակաց բարեխօսութիւնը ոչ անհիմն է եւ ոչ անտեղի, այլ աստուածածանօթ կարգաւորութիւն, զոր մեր եկեղեցին ընդունելով կյարգէ, եւ այն ոչ թէ ըստ Վաղենտինեաների եւ Գնոստիկեանների վարդապետութեանց աստուածական պատուով եւ երկրպագութեամբ, այլ լոկ յարգական պատիւ տալով իբրեւ առաւել արժանաւորագունից, եւ առ Աստուած սիրելի եւ յարգելի եղելոց:

(Ի յետագայ)

ՍԵՐՈՎԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓԵՐԻՋԻ ԱՅԹԵՐԷԶԵՆԴԻՍ

Ի 1878 ԱՄԻ.

Ներկայ տարւոյս Մայիսի 1-ը քաղաքակրթութեան տարեգրութիւններին մէջ անմահ եւ նշանաւոր տեղ պիտի բռնէ: այդ օրը կատարուեցաւ Փարիզի ամենաջրեղ աշխարհահանգէսին բացումը: Աշխարհահանգէսն այն հաստատութիւնն է՝ ուր ամեն ազգ եւ երկիր իւր ձեռագործները, ճարտարարուեստները, պատկերները, մեքենաները, գիւտերը եւլն հանգէս կհանեն իւրաքանչիւրն իւրեանց ազգային ճաշակով շի-

նաճ տներն մէջ, ուր իւրեանց ազգութենէն ներկայացուցիչներ կ'ընկնէին ազգային կերպարանքով, հագուստներով, լեզուով եւ սովորութիւններով, Հաստատութիւն մի, ուր մարդ կարող է իւրաքանչիւր երկրի վերայ գրեթէ նոյնչափ գաղափար ստանալ՝ որչափ պիտի ունենար՝ եթէ տարիով նոյն երկիրը ճանապարհորդելու երթար: Կարճ ասելու համար՝ աշխարհահանդէսը ամբողջ երկրագունդի մանրանկարն է, ուր փոխանակ ազգերը լեռներով, ծովերով եւ թշնամութիւններով իրարմէ բաժնուած լինելու՝ միայն նեղ պատերով զատուած են:

Հին ժամանակներէն ի վեր սովորութիւն կար սր եւ իցէ երկրի բնական եւ արուեստական բերքերը հանդէսի հանել, բայց սոքա տօնավաճառի ձեւ ունէին եւ սահմանափակ շրջանի մէջ կրկատարուէին. սոցա մէջ երեւելի են Նէյպցիգի հանդէսը՝ գրքերի համար, Լիոնի հանդէսը՝ մետաքսեղէնի, ժընէվիւնը՝ կաշեղէնի, Ամստերդամիւնը՝ գոհարեղէնի, եւլն. իսկ սոցա մէջ աւելի նշանաւորն եղաւ 1798-ի Փարիզի հանդէսը, որ տօնավաճառի դրութենէն ելել էր արդէն, միայն թէ նորան մասնակցեցան յառաջ գաղղիական քանի մի նահանգներ եւ յետոյ ամբողջ Գաղղիան. իսկ օտար աշխարհներ նորա մէջ մասն չունեցան: Կասեն, թէ սորանէ ետքը Գաղղիացիներն սկսան մոռնել, որ փոխանակ այդպիսի հանդէսին մէկ ազգ մասնակցելու՝ շատ աւելի օգտակար եւ փառաւոր կ'ընէր՝ եթէ ուրիշ ազգերն էլ մասնակցէին: Այս գաղա-

փարն թէեւ նոքա ունեցան, բայց քաղաքական այլեւայլ ձախող հանգամանքներէ արգելեալ՝ չկարողացան իրենք գործարել: Այլ Անգղիան օգտուեցաւ այն խորհուրդէն եւ առաջին անգամ Լոնդոնում 1851-ին բացուեցաւ ամեն ազգի արտադրութիւններին հանդէսը, որ այլ եւս «Exposition Universelle» սկսաւ կոչուիլ: Սորանէ ետքն 1855 ին, 1863 ին, 1867 ին, 1873 ին տեղի ունեցան աշխարհահանդէսներ, աւելի կամ պակաս շքեղութեամբ, առաջին երեքը Փարիզում, չորրորդը Վիենայում, վերջին անգամ 1876 ին ճոխ աշխարհահանդէս բացուեցաւ Ֆիլադէլֆիայի մէջ (Միացեալ Նահանգներում), որից ետքը Գաղղիայի կառավարութիւնը պաշտօնապէս յայտարարեց սր 1878 ին աշխարհահանդէս պիտի կատարուի Փարիզում: Այս հրաւերը Եւրոպայի բոլոր պետութիւններէն — բաց ի Գերմանիայէն — եւ միւս աշխարհներէն ընդունելութիւն գտաւ: Անմիջապէս գործի ձեռնարկուեցաւ: Գաղղիական կառավարութիւնը վճռեց որ ելն — պալատներ շինուին աշխարհահանդէսին համար, մէկը մշտնջենաւոր, միւսն առժամանակեայ, որոց շինութիւնն սկսեցին Սէն գետի արեւելեան եւ արեւմտեան եզերքներում: արեւելեանը Տրոկադէրոյ հրապարակին վերայ, որ բարձր դիրք ունենալով՝ բոլոր Փարիզը եւ Սէնի ընթացքը կդիտէ. այս կողմը ձգուած շինութիւնը հրապարակին անուշով կոչուեցաւ Տրոկադէրոյի պալատ եւ մշտնջենաւոր է. իսկ արեւմտեանը Արէ-

սեան դաշտին վերայ, (Champ—de—Mars), որ միեւնոյն անուընդ կկրէ եւ բուն աշխարհահանգէսին համար է: Ուրիշ տէրութիւններ իւրեանց կողմէն ճարտարապետներ, գործաւորներ զրկեցին, որ իրենց բաժինը իրենց ազգային ճարտարապետութեամբ շինեն եւ ճաշակով զարդարեն: Հազարաւոր գործաւորներ միջիւնի նման Չաարի աշխատեցան: Թէեւ քաղաքականապէս անկարելի է գէթ ամենափոքր գաղափար կազմել տալ այդ հսկայական պալատներին վերայ, սակայն համառօտակի դոցա գիրքը նկարագրեմք: Տարածքը ճորտագէտոյն արեւելեան ճակատը որ դարձած է գէպի Ռուս — դը — Ռօմ հրապարակը՝ կազմուած է 30 մետր երկայնութեամբ հանդիսարանէ ինն մեծ եւ հոյակապ պատուհաններով. այս յարկի տակ կը գտնուին ինն հատ ուղղանկիւն մուտքեր գէպի պալատը՝ վերնայարկը քանդակաւոր եւ վանդակաձեւ դահլիճ է, որի կտուրը աստիճաններով հետզհետէ երկու կողմէն գէպի մէջ տեղը կը արձրանայ, եւ զարդարուած է ութ արձաններով: Մեծ հանդիսարանին երկու կողմը՝ շինութեան ճակատէն աւելի յառաջ բերուած երկու դահլիճներ կան պատշգամի ձեւով՝ դրօշներով զարդարուած, որոց թէ գոյները եւ թէ պատուհաններն աւելի ընդարձակ են քան թէ հանդիսարանինը: այս պատշգամների բուն ետեւներէն՝ պալատի ճակատին մակերեւոյթէն երկու ահագին աշտարակներ կը արձրանան: մօտ 40 սաժէն (82մետր) բարձրութեամբ, որոց քառակուսիխա-

րխսի ամեն մի կողմը 14 մետր (46, 5 սաժէն) է: Այս աշտարակների երկու կողմը կ'գտնուին մի մի խորհրդարանի դահլիճ, որից ետքը պալատի պարզ միայրականի շինութիւնը կ'շարունակէ երկու կողմը: Միայն այս ճակատը 80 մետր երկայնութիւն ունի: Պալատի արեւմտեան ճակատը՝ որ գէպի Սրէսեան դաշտը կ'նայի՝ շատ աւելի փառաւոր է: Այս կողմէն, ճակատի միջին տեղը բռնած է, երկյարկանի ահագին մեծութեամբ եւ շքեղ հովանոց (Ronde) բարձր խարիսխի վերայ, կամարակապ եւ սիւնադարձ: Այս հովանոցին վերայ մի ուրիշ հովանոց կայ՝ բայց ոչ առաջնին չափ մեծ, եւ դարձարուած է գեղեցիկ արձաններով. սորանէ վեր գմբէթն է՝ 6 կիսաբոլոր մեծամեծ պատուհաններով: Գմբէթի ծայրը ղետեղուած է Պ. Անտոնին Մերսիէյի քանդակած ոգին «Համբաւ» (Renommée), որ մի ոտքին վերայ կանգնած է, գլուխը դափնիներով զարդարուած, աջ ձեռքը պսակներ եւ ձախ ձեռքը փող մի, որ բերանին դրած է: Հեռուէն նայելով՝ հիւանալի ձեւ կատանայ այս տեսարանը: Բայց վար իջնեմք՝ Առաջին հովանոցի երկու մուտքերը արձաններով զարդարուած են. իսկ մէջ տեղէն խարիսխին մէջ ծակեր թողնուած են եւ առջեւը ունի աստիճաններ, սոցանէ վար ձուլածեւ մեծ աւաղան երեք մեծ շատրուաններով՝ որ 12 սաժէն բարձր ջուր կ'նետեն: Երբ ջուրը թողնուի՝ ծակերէն պէտք է բլիւն եւ աստիճաններին վերայ սահանք կադմելով աւաղանը լեցուի: Աւաղանի բոլորը ծաղկոցներ եւ պարտէզ են՝ չորս

կենդանիների արձաններով, եւ կշարունակուին մինչեւ Սէնի բերանն եղած շինութիւնները: Պարտէզին մէջ այստեղ այնտեղ սփռուած են արեւելեան ճարտարապետութեամբ շինուած տներ — Զինական, ձապոնական, Պարսկական եւայլն, որ կապահանուին այն երկիրներից եկած բնակիչներով՝ ազգային շքեղ շանդերներ հագած: Յետոյ կը գան հիւրանոցներ, ջրամբարներ (Ջրային կենդանիներ պահելու), ջերմոցներ, ուր արեւադարձական եւ ամեն կլիմայի բոյսերէն կախուին, անձաւ, ուր միլիոնաւոր հայելներ դիւթական տեսքով կշողշողան: Մաղիոցների մէջ երեւելի է կակաչների մէկ մարդ, որ Հարլէմ քաղաքինն է, ուրտեղ կակաչներով քաղաքին ղինադրօշը դուրս է բերուած, եւ չորս բոլորը նոյնպէս կակաչներով գրուած «Հարլէմ. Հոլլանդիայ» Տրուկադէրոյի մէջ երեւելի է մեծ հանդիսարանը որ 7000 մարդ կպարունակէ. սա 15 սաժէն բարձրութիւն եւ 30 սաժէն երկայնութիւն ունի, եւ գիշերները 4000 գազային լապտերներով կը լուսաւորուի: Աշխարհահանգէսի քաղաքին հանդէսն այստեղ եղաւ. այստեղ նաեւ Հոկտեմբերին սրտուանշաններ պիտի բաժանուին. իսկ աշխարհահանգէսի ամբողջ շարունակութեանը՝ այստեղ ամենաքաղցր նուագահանգէսներ պիտի տրուին, որի համար ամեն աշխարհէ երգիչ խումբեր Փարիզ կ'ոգովին:

Սէնի արեւելեան եզերքէն արեւմտեանն անցնելու ճանապարհն է Իենայի կամուրջը, որ աշխարհահանգէսին

պատճառով լայնացուցած եւ բարձրացուցած է, եւ տակէն ստորերկրեայ ճանապարհ շինած շոգիի եւ ձիի երկաթուղիների համար: Տրուկադէրոյի կողմէն երբ այս դին անցնիմք՝ յառաջ կ'առաջին անգղիական երկու գեղեցկաշէն ամառանոցներ, գործարանների տեսքեր, եւ շատ կրպակներ. սոցանէ անցնելով պալատի բուն ճակատը կերեւի ապակիէ խիստ բարձր գմբէթներով, ոգիների երկու խոշոր արձաններով եւ եւրոպական վեց ցեղերի արձաններով պսակուած: Այս պալատում ամենէն յառաջ աչքի գարնողը օտարականների փողոցն է 340 սաժէն երկայնութեամբ, ուր ամեն ազգի թէ հին եւ թէ նոր ճարտարապետութեամբ եւ ճաշակով տնէր եւ պալատներ կան շինուած. նախ եւ յառաջ դէմ կենէ Հնդկական խորանաձեւ հովանոցը գիւթական ձեւով. յետոյ կգայ օրինակելի գործարանի մի փառաւոր շէնքը, յետոյ յաջորդաբար կգան Անգղիական, Միացեալ Նահանգների, Շուէտ — Նորվեգիական, Իտալական շինութիւնները մարմարէ, աղիւսէ եւ փայտէ: Սոցանէ ետք ձապոն, Զինաստան, Սպանիայ եւ Աւստրիայ — Հունգարիայ իւրեանց ճարտարապետութեան մեծամեծ օրինակները հանդէս կհանեն: Ռուսական խրճիթները կերելին ճարտարութեամբ դարգաւորւած եւ նկարուած: Զուլցեբիայի գիւղական արները եւ վերջապէս ամեն ազգի շէնքերը, իրարմէ տարբեր ոճերով եւ սղըքեական ձեւերով: Այս բոլորը փողոցի արեւելեան կողմը կը գտնեն, իսկ արեւմտեանն ամբողջ պահուած է Գաղղիա-

յին, անյալէս որ սա նոյնչափ տեղ կու-
նենայ իւր համար՝ որչափ միւս ազգերն
իմիտսին: Այս շէնքերը մուտք կկազմեն
դէպի իւրաքանչիւր ազգի բաժինը, եւ
այնչափ նորութիւն կպարունակեն՝ որ
այս փողոցը մոնոպոլ առաջին տեսքէն
իսկ կհիանայ. ափիոն ծխող մի այսքան
շքեղ եւ ճոխ երազ տեսնել կարող չէ:
Պալատի ներսի շէնքը յարմարցուցած է
աշխարհահանդէսի պահանջած ձեւին,
այսինքն քանի մի կարգ երկայն սրահ-
ներ, որոնք խաչաձեւ ուղիղ անկիւնով
կկտրուին ուրիշ սրահներով՝ որ աւելի
կարճ են: Երկայն սրահները պահուած
են Գաղղիացիներին, եւ ուրիշ ազգերի
գեղարուեստներին. իսկ կարճ սրահնե-
րը յատկացուցած են միւս ազգերին:

Ոչ մի աշխարհահանդէս մինչեւ ցայ-
ժըմ՝ այսպիսի մեծութիւն եւ շքեղու-
թիւն ունեցած չէ. Արէսեան դաշտին
վերայի շինութիւնները 220000 քառա-
կուսի մետր տարածութիւն կըռնեն,
իսկ Տրոիադէրոյի պալատը 50000 ընդ-
ամենը 270000 քառ. մետր, մինչ-
դեռ 1867ի աշխարհահանդէսը միայն
153000 քառ. մ. տեղ գրաւած էր. ամ-
բողջ պալատները շինուած են երկաթէ,
չուգունէ, ազնիւ եւ գոյնզգոյն քարէ
եւ ապակիէ: Արէսեան դաշտի շինու-
թիւններին համար միայն 19,020,774
բիլլոգրամ (մօտ 1,160,000 տոնղ) եր-
կաթ է գործածուել: Արէսեան պալատին
մէջ այնպիսի սրահներ կան, որոց մէկ
ծայրէն միւս ծայրը հազիւ կտեսնուի:
Ամբողջ երկու պալատներին վերայ ծախք
եղած է մօտ 50,000,000 ֆրանկ:

Մայիսի 1-ին (ըստ նոր տոմ.) շինու-
թիւնները պատրաստ էին արդէն. բայց
այդ ճարտարապետական հրաշալիքները
կանգնելը նոյնչափ դիւրին չէր՝ որչափ
որ դիւրութեամբ կգրուի կամ կկար-
դացուի: Ի բաց առնելով այն ահագին
ծախքը, ի բաց առնելով ժամանակի
անձկութիւնը, պէտք էր պատերազմել
եւ ուրիշ թշնամիների հետ, որ գործի
խանգարուիլը կցանկային: Պոնապար-
տեան, Օրլէանեան եւ ուրիշ վարչական
կուսակցութիւններ, որ հասարակապե-
տական ձեւը Գաղղիայէն վերցնել կու-
ղեն՝ ամեն տեսակ արգելքներ եւ խոչ-
ընդոտներ կհանէին հասարակապետու-
թեան առջեւ, որ ձեռնարկութեան մէջ
չյաջողի. անցեալ տարի մայիսի 16էն
եռքն այնպիսի նեղ օրեր ունեցաւ Գաղ-
ղիան, որ գրեթէ յուսահատեցաւ աշ-
խարհահանդէսի յաջողութեւնը մասին.
պետութեան վարկն ընկաւ, ներքին պա-
տերազմի վտանգներ երեւեցան, եւ մին-
չեւ անգամ սկզբնաւորութիւն եղաւ
բայց ի վերջոյ հասարակապետութիւնը
յաղթական դուրս եկաւ՝ եւ իւր գործը
շարունակեց հսկայական քայլերով:

Այս աշխարհահանդէսը արուեստի
եւ գիտութեան վերաբերութեամբ ու-
նեցած նշանակութենէն զատ քաղա-
քական նշանակութիւն էլ ունի: Սորա-
նով հասարակապետութիւնը բոլորովին
ապահով կերպով հաստատուեցաւ Գաղ-
ղիայում: Հերուան մայիսի 16-էն բաց-
ուած կռուին յաղթանակն է՝ որ այս
տարի մայիսի 1-ին կտանի, եւ մանա-
ւանդ վրէժխնդրութիւն մ'է 1870-71
թուերի մեծ կորուստին, վրէժխնդրու-

թիւն՝ որ քաղաքակիրթ եւ լուսաւորեալ երկրի միայն վայել է. եւ ինչպէս որ յաղթուածին անվայել է իւր յաղթականի հանդէսին եւ ուրախութեան մասնակցել, կարծես թէ նոյնպէս չմասնակցիր այսօր Գերմանիան իւր մեծ ախոյեանի համաշխարհական յաղթութեան եւ փառաւոր հանդէսին. Աշխարհահանդէսին այսպիսի քաղաքական բարձր նշանակութիւններ ունենալը նկատելով, կառավարութիւնը վրձնեց որ առանձին շքեղութիւն եւ ազգային տօնի կերպարանք տայ նորա բացումին:

Փարիզ տասն եւ ութ ամիսներէ ի վեր, որոց ամեն մին մէկմէկ երկար տարիի նման անցել էին՝ անհամբեր սրտով մայիսի մէկին կտպասէր. ուստի եւ երբ այս անձկալի օրը լուսացաւ՝ առաւօտէն ի վեր՝ ամենանշանաւոր տօնի մը կերպարանք զգեցած էր այն ծովացեալ քաղաքը: Շատ կրպակներ գոց էին, եւ հետզհետէ քանի որ օրը կ'յառաջէր եւ քանի որ դէպի պալատների կողմը աւելի կ'մօտիկուէր՝ խուռն բազմութիւնը եւս առաւել կ'աճէր. արդէն ժամը 12ին երկու պալատները գրեթէ բոլորովին շրջապատուած էին անթիւ բազմութեամբ: Ժամը երկուքին Հասարակապետութեան նախագահը (Մակ Մահոն) կառքով եկաւ. եւ երկրագործութեան ու վաճառականութեան նախարարը նորան ընդունեց Տրոկադէրոյի պարտէզէն առջեւ եւ հանդիսարանը տարաւ: Այնտեղ շքադիր խումբ մի (Cortège) կառմանեցաւ, որին մասնակից էին նախագահը, Անգղիայի, Գանիայի, Հոլանդա-

յի թագաժառանգները, Աէյսդէներգի դուքսը, ծերակոյտի եւ պատգամաւորների ժողովի նախագահները, դեսպանական գործոց պաշտօնեայքը, Աշխարհահանդէսի գլխաւոր կառավարիչը, ուրիշ տէրութիւնների պատգամաւորներն եւլն, որ եկաւ հովանոցին առջեւ, ուր երկրագործութեան եւ վաճառականութեան նախարարը համառօտ ճառ մի խօսեցաւ, որից ետքը նախագահը յանուն Հասարակապետութեան, Պարոնների, ասաց, Աշխարհահանդէսը բացուած է:

Այս խօսքերին մեծ շարժում մի յաջորդեց. թիւանօթները որոտացին, նուագախումբը ազգային երգը հնչեցուց. ջրվէժը յանկարծակի դուրս հոսեց. երկու պալատների կրտսերնին վերայ ամեն ազգերի դրօշակներ սկսան փողփողել: Կէս միլիոն հանդիսականների բերաններէն կեցցէնէրի անլուելի գոչիւնը օդը հնչեցուց. . . . Աշխարհահանդէսը հանդիսապէս բացուած էր: Յետոյ նոյն խումբը պաշտօնապէս ճեմելու ելաւ երկու պալատներին մէջ, եւ ամեն մի ազգի բաժինն հարեւանցի աչքէ անցնելէ ետքը՝ պաշտօնական հանդէսն աւարտեցաւ: Բայց ժողովուրդը իւր հանդէսը շարունակեց նաեւ գիշերը: Առանց կառավարութեան կողմէն թելադրութիւն մի լինելու՝ ժողովուրդն իւր կողմէն գիշերը հրավառութիւն արաւ՝ ոչ միայն նշանաւոր փողոցներում, այլ եւ Փարիզի ամենահեռաւոր եւ աննշան մասներում: Յերեկը, որ շատ անձրեւային լինելուն համար՝ հանդէսին շքեղութիւնը արա-

տաւորեց՝ երեկոյին տեղի տուեց մէկ պայծառ գիշերի, եւ այս ժամանակ ամբողջ Փարիզը իւր 300000 նոր հիւր եկած օտարականներով, անթիւ կառքերով կգբօսնէր շրայնցիչ հրաւառութեան մէջ:

Հետեւեալ օրերը մեծ բազմութիւն կայցիէր Աշխարհահանդէսին: որոց միջին թիւը 30000 հոգիի կհասնի: սոցամուտքին համար վարձք շատ մեղմ՝ նըշանակուած է: ու որ ամբողջ Աշխարհահանդէսին համար մաներու իրաւունք պիտի առնէ՝ մէկ անգամէն 100 ֆրանկ կվճարուի: Իսկ անօրեայ մուտքի գինն է մէկ ֆրանկ: որ կերակի օրերը աւելի եւս պիտի թեթեւանայ: եւ թեթեւ բոլորովին անվարձ լինի:

Մի քանի խօսք եւս: Աշխարհահանդէսի տեւողութեան ժամանակ Փարիզում ուրիշ միջնադպիւն եւ ազգային հանդէսներ տեղի կունենան: Սոցա գլխաւորն է Դրականական ժողովը, որին

մասնակցելու կանչուած են ամեն ազգէ երեւելի մատենագիրները: այս ժողովին պիտի նախագահէ Վիկտոր Հիւգոյ, ուր այս մեծ ոգին ընդարձակ տաճարաշութիւն մի եւս պէտք է անէ: Երկրորդն է Պոչտի եւ Բուսարանութեան ժողովը, որին պիտի նախագահէ Բրազիլիայի Կայսրը — Դոն Պետրոյ: լինելու է նաեւ Իսլոցական ժողովը, որտեղ պիտի քննուին մանկավարժական ձեւեր, դասագիրքների ոճեր եւ ամեն բան՝ ինչ որ դպրոցին կրեւրաբերի: Կատարուելու է Վոլտէրի հարկւրամեակը, որի կազմուելուն պարագլուխ է Գաղղիայի արդի երեւելի ճարտասան եւ քաղաքագետ Գամպեստայ: Սոցանէ՝ զատ Եզիւսեան դաշտում բացուեցաւ մայիսի 15ին ամեն տարի սովորական ճարտարարուեստների պալատը — Սալոնը, ուր հանդէսի կգրուին երեւելի պատկերներ, արձաններ եւ փորագրութիւններ:

ՕՏԵՓԱՆՈՍ ՄԱՐԿԱՍԵԱՆՑ:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՀՈՒՐՆ ԵՐԿՆԻՅ:

(Ի Վիկտոր Հիւգոյ.)

24. Եւ Տէր տեղաց իմոյսը եւ իմոյսը ծծուկը եւ հուրի Տեառնէ յիւրկնց:

25. Եւ կործանեաց զբաղարան զայնոսիկ եւ զամենայն կողմանս եւ զամենայն բնակիս քաղաքացն եւ զամենայն բոյս երկրին: Եւ Եւրոպայի իմոյսը:

Ս.

Քոր սրբանայս նըշմարէք, ամպրոպ ի տես թըխպագոյն:

Մերթ վնասահեղ ի տեսիկ, հրաշէի երբեմն եւ տըժգոյն:

Մըռայլ՝ զինչ ամառն ի բերոց թափուր:

Ի թեւ հողմոց զիշերոյ տեսանել իսկ թուի համակ,
Թէ մղիցի ծովս աստիկ, Է ապշուպ աղմուկ բովանդակ
Վաղաքի ուրեք, կիզելոյ ի հուր:

Յերկնից արդեօք, ի ծովէ, թէ ի լեռանց զիմեալ գայ.
Իցէ՞ այս կառք հրեղէն, որ զջուկ դիւաց ամբառնայ
Ի լուսաւորաց դաւառ մերձաւոր:

Ո՛վ արհաւիրացս, ուստ՝ իցէ, զի կայծականց շանթ ահեղ
Երբեք երբեք ի ծոցոյն՝ զինչ գալարուն օձ կարշնեղ՝
Ճայթէ յանդընդոցն, — վե՛հ խորհրդաւոր:

Բ.

Ծ՛ով. համայն ծով ընդ հանուր, ալիք, անդրէն ալեաց շար —
Ի զուր թըռչուն պարտասէ ըզթըռիչս իւր ապիկար —
Ելիք են աստուտ և անդուտ կոհակք:

Հանուր ալիք անսահման նոյալիս մըխին, հարկանին,
Չալիս եկեթ փրփրադէղ նըշմարէ ակն յանդընդին,
Յորում ընթանան ծրփանք անատակք:

Ձըլունք երբեք մեծամեծք ջուրց յըզօսանս մինչ կայտոլին՝
Երծաթափայլ անդ լուղակքն հանդէպ ցոլեն արեղին,
Սամ լայնի տըտունք յերկնային իւզոյն:

Ծով ի զեղմանց մերկացեալ խաշանց թըռի զոլ պառակ.
Ելլ հորիզոն ի հեռուսա պատի յարոյր շըրջանակ:
Խառնին կապուտակք երկնից եւ ջրիոյն:

— Փոխել պարտիցէ ըզծովքս ի ցամաք, — հարց ամպրոպն հրեղէն:
— Ո՛չ. — և նա կալաւ ի շունչ Եստուծոյ զիւր թըռիչս անդրէն:

Գ.

Ծովակ, ուր բլուրք զալարագեղ
Խաղաղ յալիս ցոլեն մընչեն: —

Եզինք և նետք և զուարճ զեղ զեղ
Օղապարաց անդ միշտ հընչեն: —
Եր տաղաւար. մըսուր խաշանց
Ի՛նչակք՝ որսորդ թըռչնոց, ձըլանց,

« Բանա՞յ Բանա՞յ, որո՞ց նետք արեղանց, որ՞ սմե՞յ Դ
 Բանա՞յ Բանա՞յ, որո՞ց նետք արեղանց, որ՞ սմե՞յ Դ

Երանցս, որ այսր յաճին թափառ:

« Երգե՛լ լինի ոչնչ՝ օր վատ, արդա ընկնի՞մ

Մանկունք, աղջկունք, յօրինեն պար, յե՛ր

Ի սղեղնա՛րք վառք ի ջոկատա՛յ Դ

Բնա՞յ Բանա՞յ, որո՞ց նետք արեղանց, որ՞ սմե՞յ Դ

Որ ի սրբոյն մեղմի պարզի՛, ցմե՛ց ցմե՛ց Դ

Որպէս որդի՛, զորն յերազն ի մե՛լ Դ

Սարժէ շրջել այր յիւր ճակատ:

Սուսանքն, այց լանջք իբր երեսնայ

— Երգե՛լ լինի ոչնչ՝ օր վատ, արդա ընկնի՞մ

— Երգե՛լ լինի ոչնչ՝ օր վատ, արդա ընկնի՞մ

Ի հայկիս՝ խնկան ի խաղա՛ մե ցի՛յ

Մանկունք, աղջկունք, յօրինեն պար, յե՛ր

Ի ծոց, ի սրբոյն մեղմի պարզի՛, ցմե՛ց ցմե՛ց Դ

Սարժէ շրջել այր յիւր ճակատ:

Սուսանքն, որ անդ կան ի մակալ:

— Երգե՛լ լինի ոչնչ՝ օր վատ, արդա ընկնի՞մ

— Երգե՛լ լինի ոչնչ՝ օր վատ, արդա ընկնի՞մ

Սարժէ շրջել այր յիւր ճակատ:

— Երգե՛լ լինի ոչնչ՝ օր վատ, արդա ընկնի՞մ

— Երգե՛լ լինի ոչնչ՝ օր վատ, արդա ընկնի՞մ

Սարժէ շրջել այր յիւր ճակատ:

Բնա՞յ Բանա՞յ, որո՞ց նետք արեղանց, որ՞ սմե՞յ Դ

Մանկունք, աղջկունք, յօրինեն պար, յե՛ր

Ի ծոց, ի սրբոյն մեղմի պարզի՛, ցմե՛ց ցմե՛ց Դ

Եւ վայր մի զտեղեաւն վարանեալ ամարտալ « անյս իցէ » եհարց.

Եւ զիտի մարդկան, ո՞ պատասխանի ետ նրմա թէ « անց »:

— Երգե՛լ լինի ոչնչ՝ օր վատ, արդա ընկնի՞մ

— Երգե՛լ լինի ոչնչ՝ օր վատ, արդա ընկնի՞մ

— Երգե՛լ լինի ոչնչ՝ օր վատ, արդա ընկնի՞մ

— Երգե՛լ լինի ոչնչ՝ օր վատ, արդա ընկնի՞մ

— Երգե՛լ լինի ոչնչ՝ օր վատ, արդա ընկնի՞մ

— Երգե՛լ լինի ոչնչ՝ օր վատ, արդա ընկնի՞մ

ԱԶԳԱՅԻՆ

ԺԱՊՁ ՏՏԲԵԴԱՐԶ

051

Ի 21^ն Մայիս ամսոյս եկեղեցական արժանաւոր հանգիսիւ տօնախմբուեցաւ Վեհ. Հայրապետի Ազգիւ Տ. Տ. Գէորգայ Դ. Սրբազնազոյն Կաթուղիկոսի Օծման ԺԱՐԳ Տարեդարձը:

ԳԱՍՊԱՐԵԱՆ ԱՊԱՍՏԱՆԱՐԱՆ

ԵՒ 1877 ԱՄԻ ԵԼԵԻՄՈՒՏԲԸ.

Մոսկուայի Հայոց Գաղութան Ապագայանի Խորհրդարանի յանդէն Վեհ. Հայրապետի ներկայացուցած յայտարարութենէն եւ անցեալ 1877 ամի հաշուեկշռէն հետագաները ծաղկաքաղել եւ հրատարակել արժան կհամարիմք:

« 1. Յընթաց 1877 ամի ընդ խնամատուրութեամբ Ապաստանարանին էին 9 անձինք, Թուշմալեան, Փիրաղեան երեքեանք, Խուրիկեան, Նաղարեան, Կուկուջանեան, Աւարեկեան եւ Սախարեան, յորոց պառաւանց՝ Թուշմալեանի, Փիրաղեանի, Խուրիկեանի:

ըրիկեանի, Նաղարեանի, Աւարեկեանի, Սախարեանի եւ Կուկուջանեանի տուեալ է ի Խորհրդարանէ առաջին անձանց յընթաց ամին 6 ր, իսկ Կուկուջանեանցի միայն մինչեւ ցՄարտ ամիսն ծախս սեղանոյ ըստ 9 բուր. եւ ի զին ճրագի յընթաց 6ից ծմերնային ամսոց ըստ 90 կոպ. իսկ ի մնացեալ ժամանակս տարւոյն ըստ 40 կոպ. յամիսն, այլ Փիրաղեան օրիորդը եւ Կուկուջանեան ի Մարտ ամսոյ միայն կալեալ են զընակութիւն յԱպաստանարանի: Բաց յայսմանէ, ունելով ի նկատի զաղքատութիւն, Խորհրդարանն վճարեալ է յիւրաքանչիւր ամսոյ ի զումարաց Ապաստանարանին յօգնականութիւն՝ այլի կանանց՝ Մանրեկեանի ըստ 20 ր. Ալամխանեանցի եւ Բաբանեանցի ըստ 40 ր, Բերուրեանցի եւ Տէր-Մովսէսեանցի ըստ 5 ր. եւ աշակերտուելոյ Յրդ զիմնագիծին Մոսկուայի օրիորդ Սերբերեկեանցի վասն վարձուց ուսման նորա յօրիորդական գիմնադիծին եւ վասն իւսումնական առարկայից ըստ 40 ր. յամիսն, եւ բաց յայսմանէ ի հետեւումն աղերսադրութեանց՝ ի նկատի առեալ Խորհրդարանին զկարի ողորմելի դրութիւն՝ տուեալ է ժամանակաւորապէս կնոջ Տիտուլեանի Սովետիկ Աննայի Ալամխանեանց ընդ որդուլք զ50 ր, այլոյն Մուրատեանի զ36 ր, այլոյն Բերուրեանի զ25 ր, եւ Մարիամու Տէր-Մովսէսեանց զ50 ր, եւ ի ծեռն անդամոյ սորին Աւաղ քահանայ Յակոբայ Սուրէնեանց բաժանեալ է աղքատաց զ20 ր, ընդամենն Խորհրդարանն ի 1877 ամի Թէ յԱպաստանարանի եւ Թէ արտարոյ նորին տուեալ է օժանդակութիւն ժամանակաւորապէս եւ մշտական 19 անձանց բաց ի ջրուեալ զրամոց ի կարօտեալս փոքու քանակութեամբ:

2. Հաշիւ զումարաց Ապաստանարանին վասն անցեալ 1877 ամի առաջի արարեալ լինի հետագայ ծելով:

Առ 1 Յունվարի 1877 ամի մնայր ի զրամարկել յԱպաստանարանին.

Տոկոսաբեր տոմսը	36007	75
Յայն Թիւ տոմսը, որք բերին զամս զ4% տոկոսին	49900	
25% տոկոսիս	6007	75
	36007	75

Առ ձեռն պատրաստի	249 94	56257 69
Ստացեալ եղև յընթացս ամին	2274	
Ժողովեալ յեկեղեցւոջ յաւուր տօնի Ծննդեան եւ Յարութեան Բրիստոսի	185 24	
Յանդամոց խորհրդարանին վասն թոշակի քարտուղարին	120	
Յանփոփոխ անդամոյ խորհրդարանին ի Լիանդեանցէ փոխարինաբար ի պէտս ծախուց Ապաստանարանի	694 27	
	5270 54	
Ընդամենն եկամուտք մնացորդովք	59528 20	

ՅԵՆԴՈՐՈՒՄ Ի ԿԵՆՏՐՈՆԻ ԵՎ ԵՎԵՐԵՏԻ ԵՎ ԵՎԵՐԵՏԻ ԵՎ ԵՎԵՐԵՏԻ

Վասն վառարանաց, լուսաւորութեան, կարկատանաց եւ ապահովելոյ զտունն Ապաստանարանին, մարքիւղ զծխնելոյցս եւ անմարուր տեղիս	579 5	
Վասն սեղանոյ եւ ճրագի խնամարկելոցն	741 60	
Վասն ղեղօրէից ի պէտս նոցա	42	
Վասն նորոգելոյ զանցածուղի խորհրդարանի	3 49	
Ջրկրի եւ յարգարելոյ զներքնատունն	28 50	
Ռոճկադրամ քարտուղարի խորհրդարանին, վասն մատենից ի պէտս խորհրդարանին, դիւանական պատկանելի հրատարակութեան յազազս ընդհանուր ժողով զումարելոյ եւ մանր ծախուց	140 66	
Ի թոշակ սպասուարի եւ ի ղին խոհարարի	205 60	
	1680 88	

ՏՈՒՆԻ ԵՎ ԵՎԵՐԵՏԻ ԵՎ ԵՎԵՐԵՏԻ ԵՎ ԵՎԵՐԵՏԻ

Մշտական յընթացս ամին	555	
Ժամանակաւորապէս	181	
	736	
Աշակերտութեան ղիմնագիծի Սերերրակեանի	120	
	856	
Գարծուցեալ է անփոփոխ անդամոյ խորհրդարանիս Լիանդեանի զստացեալս ի նմանէ փոխարինաբար	694 27	5251 15
Առ 1 Յունվարի 1878 ամի մնայ ի հրամարկեղ Ապաստանարանին		
Տոկոսաբեր տոմար	56067 75	
Առ ձեռն պատրաստի դրամք	289 50	
	56297 5	
Գումար բոլոր ծախուց ընդ մնացորդովքն	59528 20	

5. Առաջարկեալ հաշիւն ինք մնացելովք առ 4 Յունվարի 1877 ամի տոկոսաբեր տոմսիւք, եւ պատկանելի վկայաթղթովք, ի վերայ հիման § 40 կանոնաց վասն կառավարելոյ զտուն Ապաստանարանին առաջարկեալ եղեւ ի հաշուետեսութիւն հասարակութեան Հայոց Մոսկուայի լընդհանուր ժողով ի 26 այսր Մարտի, որ յետ հաշուետեսութեան ընդ ձեռն ընտրեալ ի միջոյ իւրեանց երից անձանց անդամոց հասարակութեան եւ բաղդատութեան ընդ վկայաթղթոց, եղիտ զհաշիւն ղըդիլ եւ համաձայն ընդ վկայաթղթոցն, եւ դրամադուսք Ապաստանարանին առ ձեռն պատրաստի ի հանդամանօրէն ցուցեալ հաշիւս տոկոսաբեր տոմսս, որոյ ի մասին կազմեցաւ ի 26 Մարտի արձանագրութիւն ստորագրեալ յամենից եղելոյ ի ժողով անդր յանդամոց հասարակութեան:

4. Յանցելում ամի վերջացաւ ծառմանեալն կանոնօք վասն կառավարութեան տան Ապաստանարանին պայմանաժամ պարագայանց ի Խորհրդարանին պատուաւոր քաղաքացի Ս. Կ. Ջանումեանի, զորմէ Խորհրդարանն առաջի արար ընդհանուր ժողովոյն հասարակութեան Հայոց Մոսկուայի, որ յետ դատողութեան ընտրեաց յանդամ Խորհրդարանին զնոյն ինքն Պ. Ջանումեանն, զորմէ եւ կազմեցաւ արձանագրութիւն ընդհանուր ժողովոյն ի 26 այսր Մարտի:

Հետագայ յօդուածոյ հրատարակութիւնը ի սէր ճշմարտութեան թոյլ կրտրուի:

ՋԵՆՈՒՐՈՒԿԱՆ ՀԱՅ ՊԵՏՏՈՆԵԿԱԼԻ ՌԵԴԱԿՏՈՐ Ի ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.

Մեր նախնի պատմաբաններն իւրեանց ժամանակում կատարուած իրողութիւնների մասին երբեմն երբեմն հակասութիւն-

ներ եւ սխալներ եթէ արած են, այժմեան բանասէրները ներողամտութեամբ են նայում նրանց վերայ, որովհետեւ էն ժամանակը պատմաբանները շատ անգամ միմեանցից բացակայ գոլով, մէկ մէկի հետ դրաւոր յարաբերութիւններ չունենալով, ըստ մեծի մասին պատմուած իրողութիւնների տեղեկութիւններն ուրիշներից բերանացի լսելով են մատենագրել, եւ պարբերական, օրադրական հանդէսներ չեն եղած որ մէկը միւսի սխալանքի վերայ դիտողութիւններ անէր, վասն որոյ և էն սխալներն էսպէս ինչպէս մատենագրուած էին մնացել են և էս օր էլ վէճի են ենթարկվում: Բայց ներկայ դարում եթէ մամուլի տակ ընկած որ և իցէ պատմական իրողութիւնների մէջ սխալներ եւ հակասութիւններ սպորդուած լինին, աւելի բանասէրներն են ստղտանելի քան թէ հեղինակներն, քանզի մամուլի շնորհիւ ամեն միջոցներ կան, և բանասէրներն կարող են հետազոտութեամբ էնպիսի թերութիւնների վերայ ակնարկութիւններ անել, որոնք մնալով մնալով չհանձնան և սպառնալով ուրիշ պատմաբանի առիթ չտան սխալուելու կամ հակաճառութեան նիւթ լինելու:

Տարեկոյս չկայ որ ամեն բանասէր աշխատում է իր երկասիրութեան մէջ սխալներ չսպորդուէին, բայց պատահում են անզգուշութիւնից կամ սխալ աղբիւրից տեղեկութիւններ քաղելուց: Եսպիսի դէպքերում եթէ հեղինակին մամուլով ըզգուշացնեն, ի հարկէ նա ևս պիտի իր սըխալները շնորհակալութեամբ ուղղէ: Ես էլ աւելացնենք որ էնպիսի զգուշացուցիչ դիտողութիւնները հեղինակի անուան և համբաւին ոչ ինչ արատութիւն չպիտի

վերաբերելին, եթէ նոյն յամառեալած ուսանողին պատճառներ կամ փաստեր առաջ բերելով՝ չէ կամենում իր զրաճներն արդարացնելու։ Աժախտաբար այժմ ինչ ինչ հեղինակներն և յօդուածագիրներն մէջ ուրիշ մէկ ատելի սովորութիւն ևս մտած է, որ երբ մէկը միւսի աշխատասիրութեան մէջ համոզութիւններ կամ սխալներ է նշմարում ու մատնանելի առնում (ի հարկէ ասանց նրա անձնաւորութեան շօշափելով), քննադատելի հեղինակը կամ յօդուածագիրը կրտս ուրիշ դառնալով թողնում է հալան խնդիրը, որի վերայ վեճ է ծագած, զգրելի հայհուցով յարձակվում է զիտողի անձնաւորութեան վերայ, որով և պղծում է մեր մանուկ մտնոր զրականութեան ասպարէզը, ուստի և շատերն էլ, որպէս լրում սեմ, քաշվում են քննադատի զիտողութիւնների ձեռնամուխ լինելուց։ Այս անհոգեւոր և անհամոզուած եմ որ՝ էս իմ համառօտ նախադասութիւնից ուշիմ լինելը ցոյց հասկացաւ որ՝ քննադատութեան անցքերի և նրանց յիշատակարաններին, ուրեմն հիմի սկսեմք թեթեւ զիտողութիւններ անելու մի միայն էն յօդուածի մէկ պարբերութեան վերայ՝ որ 1877/78 ամի համար երրորդ եռամսեայ Փոքր հանդիսի մէջ, երես 187, ստորագրութեամբ Պ. Բաֆֆու «Նախապարհորդութիւն Թիֆլիզից մինչև Աղուլիս» վերնագրով հրատարակուած է, ուր նա ասում է թէ, «Գիշերից բւաական անցել էր երբ հասայ Աղստաֆայ իջևանը, այս տեղ ծանօթացայ նորին պայծառախոյս-նեան Վրահանդիր - խանի հետ, որ զառնում էր Արտիկայից, Պարսկաստան էր գնում։ Նորին

պայծառախոյս-նեան երևելի Սուրէյման խանի որդին է, որ իր ժամանակին Պարսկաստանի առաջնակարգ պետական անձինքներից մէկն էր։ Նա էրպէս ժամանակաւեց ամբողջ Երբայի և Սպահանի նահանգներէ, քոյրաբայոս-նեան և իր հաւատարիմ ծառայութեան փոխարէնը ստացաւ Կոնստանդնուպոլիսից Գեղարքայ (պէտք է նշան հասարակ)։ Նա աղքատ էր և մինը այն աղուականներից, որ Աղարքայ - Սաադ - խանը պարս - Թեհրան։ Իսկ որդին - Վահանդիր - խանը այժմ Դրան մօտ նոյն նշանակութիւնն ունի, որպէս իր արժանայիշատակ հայրը։ Նա իւրանշահատէր և հաւատարիմ ծառայութեամբ արժանացած է Սէր - Բանդի (Բենեթալ ինքնաբերի) ասպետի։

«Վահանդիր - խանը փարս է մշտնջերպ պաշտօնէր։ Նա ընդհանուր Պարսկաստանի զինուորեալ է և վառօղակեալ։ Նա որպէս հմուտ մեքենայեալ և հարպարասպետ, աստիճան էր, որ Թեհրանի մէջ հիմեց մի քանի ծառան ընդհանուր յոս-լու և զին-որդների աստիճան զենքերի իւր երապակեանի քոյրեց, Բայի դրանից Վահանդիր - խանը հարանի խորհրդարանի անդամ է։ Իսկ արտոնի-տեմ կարարութեմ է Գիւլիստանի անեկապէտի պաշտօն։ Վահանդիր - խանը ունի և զանազան զրականական աշխատասիրութիւններ Պարսից լեզուով, որպէս է նրա Տեհմաքի թարգմանութիւնը։ Տրանսերէնից, Եբրե պետական անձն, նա խիստ գործունեայ է և հանձարեղ, և իբրև մարդ աղնիւ և բարի։ Նա ունի մի եղբայր՝ Նարիման - խան անուանով, որ մի ժամանակ Աղեքսանդրիայի հիւպատոսն էր Պարսից կողմից։ Նա երևելի Տատեանների փեսան է և շատ ան-

նմանը ոչ թէ մէկ Հայի, այլև Առևտու-
մանի համար դուն ուրեք էր էն տերու-
թիւնը կատարած) Հայոց եկեղեցւոյ դաւ-
թումը ողջ առաջնակարգ զինուորական
և քաղաքական անձինքներն էստեղ էնտեղ
բոլորում՝ նորա պատերազմական արհես-
տի հմտութեան և անչափ ճակատամարտ-
ներ մղելու վերայ ասում, խօսում և խոս-
տովանում էին ու էս էլ ականջօքս լսում
էին. սրան էլ վկայում է Պարսկական
պատմական հիւսուածքն: Մէկ բառով ա-
սած, հանդուցեալն էնպէս ականաւոր ան-
ձն էր, որ Իրանումը նա միմիայն արտօ-
նութիւն ունէր զ«Էֆայ» (վերարկուով)
և դաւադանով ներկայանալու Տիեզերքի
Աղօթարանին կամ Բարձրագոյն Ատենու-
մը: Բայց . . . բայց այսու ամենայնիւ նա
Երրազի և Սարհանի նահանգների վե-
րայ երբէք Փոխարքայութեան և մինչև
անգամ հրամանատարութեան պաշտօն-
ներ չէր վարած, և նրա տիտղոսն էր Սե-
հաճումը: Դժգոյն այս ինքն ուր Տէրութեան,
որ և համապատասխանում էր նրա քա-
ջութեանը: Իսկ Պ. Բաթթու ասած Մօհ-
թաբի - Կոփա (որի թարգմանին հա-
պարձ Կէրո-Նեան՝ սխալ է, այլ պիտի ա-
սէր, Մօլլե-Կէր - Կոփա) այս ինքն նե-
ցուկ կամ խարխիւ Տէրութեան) և այս
տիտղոսով եղող անձն էր Մանուշար Խա-
նը, որ Սուլէյման Խանի հարազատ հօր-
եղբայրն էր: Մանուշար Խան Մօլլե-Կէր-
ում - Կոփան նախ Գիրանի հրամանա-
տար է եղած, և ապա Սարթե-Կէթի պաշ-
տօն էլ է կատարել: Իսկ 1835 ամին ըս-
տուար բանակով խաղում զնում է Եր-
րազ (Պարսստան) ինքնակոչ շահացած
Պարման - Պարմա Եահգատայի վերայ:

կալանաւորում է նրան և նրա եղբայր
Սուջա - ուլ - Սալթանէին, շատ երեւելի
ապստամբ Խաների և խլրտող ցեղապետ-
ների, և բոլորին էլ շղթայակապ առա-
քում Թէհրան: Իսկ ինքը փոքր միջոց
մնալով էնտեղ, չորս կողմի վայրենի և
նշկահող ցեղերի հետ սաստիկ պատե-
րազմներ մղելու և բոլոր Պարսստանը բա-
րեկարգելու համար, ստանում է տիտղոս
Հալէթի այսինքն Կէրէ Բաթթու-Նեան,
որ շատ վեր է քան փոխարքայութեան
տիտղոսը: Եւ միջոցումը Սիւլէյման Խա-
նը նախ մէկ բանակի և յետոյ ընդհանուր
զօրքի զօրավար է լինում (Սերէրաէ):

վրձմաքսած քան միս Կոփա (Կ. Ե. Կ. Կ. Կ.)
Համա Զին Կոփա (Կ. Ե. Կ. Կ. Կ.)

ՀԱՆՈՒՑ ՇԻՐՄԱԶԱՆԱՑ.

Վրձմաքսած քան միս Կոփա (Կ. Ե. Կ. Կ. Կ.)
Համա Զին Կոփա (Կ. Ե. Կ. Կ. Կ.)

